British Embassy Yerevan

UNDP

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

oxYGen

UKaid from the British people

WOMEN IN POLITICS
ԿԱՆԱՅՔ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

# ՍԵՔՍԻԶՄԻ

# ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ԵՎ ԽՈՍՔՈՒՄ

## ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ինչ է սեքսիզմը

Ճանաչենք

Խուսափենք

Կանխենք

Ուղեցույցը պատրաստվել է «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՕքսԵՋեն հիմնադրամի հետ համագործակցությամբ, Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» աջակցությամբ:

Ուղեցույցը պատրաստվել է ՄԹ կառավարության ֆինանսական աջակցությամբ, այնուհանդերձ արտահայտված տեսակետները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԹ կառավարության պաշտոնական դիրքորոշման հետ: Ուղեցույցում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տեսակետների հետ:

Ձեռնարկի վրա աշխատել են փորձագետներ՝ Թամարա Հովնաթանյանը, Զարուհի Հովհաննիսյանը, Արման Ղարիբյանը, Սուրեն Դեհերյանը:

Ծաղրանկարները՝ ՕքսԵՋեն հիմնադրամի՝ «ՀԱՎԱՍԱՐ» քարոզարշավի և MediaLab.am-ի:

2020

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Ներածություն**

**ԳԼՈՒԽ 1.**

**ՃԱՆԱՉԵՆՔ ՍԵՔՍԻԶՄԸ ....................................................................5**

**1.1. Ինչ է սեքսիզմը............................................................................5**

- Միջազգայնորեն ընդունված սահմանումները .....................................................5
- Սեքսիզմը նույնքան անհանդուրժելի է, որքան ցանկացած այլ նվաստացում......................... 6
- Ինչպես է արդարացվում անհավասարությունը.....................................................7
- Հիմքում գենդերային կարծրատիպերն են .........................................................7
- Թշնամական և «բարյացակամ» սեքսիզմ .............................................................8
- Սեքսիզմն ամենուր է... ........................................................................................9
- «Մենսպլեյնինգ», թաքնված և ներքնայնացված սեքսիզմ ......................................10
- Լրատվամիջոցների պատասխանատվությունը սեքսիզմը վերարտադրելու հարցում .............11
- Սեքսիստական հումորից մինչև ատելության հրահրում ......................................................12

**1.2. Բացահայտենք սեքսիզմը ...............................................................13**

- Սեքսիզմը կենցաղում և ընտանիքում ...........................................................................14
- Սեքսիզմն աշխատանքի շուկայում .............................................................................18
- Սեքսիզմը քաղաքականության մեջ..............................................................................23
- Սեքսիզմը մեդիայում և հեռուստասերիալներում .........................................................27
- Սեքսիզմն ու ատելության խոսքը սոցիալական մեդիայում ......................................29
- Սեքսիզմը գովազդում .....................................................................................31
- Սեքսիզմը կրթության և գիտության մեջ ..........................................................34

**ԳԼՈՒԽ 2.**

**ՊԱՅՔԱՐԵՆՔ ՍԵՔՍԻԶՄԻ ԴԵՄ..........................................................38**

**2.1. Խուսափենք ........................................................................38**

- Հետևենք մեր խոսքին ........................................................................................38
- Զերծ մնանք սեռի անտեղի հիշատակումից և/կամ շահարկումից ..............................38
- Ցուցաբերենք հավասար մոտեցում .............................................................40
- Լինենք ուշադիր պատկերներ ընտրելիս ..........................................................43
- Զգուշությամբ ընտրենք հումորը ...................................................................44

**Կանխենք. առաջարկություններ և լուծումներ ......................................46**

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

… Երբ Հայաստանում տեղի ունեցած վերջին նախագահական ընտրությունների ժամանակ թեկնածուներից մեկն իր հրապարակային ելույթում հայտարարեց, որ «իգական սկիզբը քաղաքականության մեջ տեղ չունի, և դա պարզ տիեզերական ճշմարտություն է», այդ հայտարարությունն անհետևանք մնաց նրա համար, թեև ակնհայտ ոտնձգություն էր կանանց սահմանադրական իրավունքների նկատմամբ …

… Երբ ոչ վաղ անցյալում խորհրդարանական ընտրություններում առաջադրված տղամարդ թեկնածուն հրաժարվեց բանավիճել մեկ այլ թեկնածուի հետ՝ հայտարարելով, որ նա կին է, և ինքը կանանց հետ բանավեճի մեջ չի մտնում, դա նույնպես համարժեք գնահատականի չարժանացավ…

… Երբ Ազգային ժողովի ամբիոնից պատգամավորներից մեկը փորձեց սաստել իր գործընկեր կնոջը՝ ասելով, որ «կինը չպետք է խառնվի երկու տղամարդկանց խոսակցությանը, նույնիսկ՝ պատգամավոր կինը», խորհրդարանը չարձագանքեց՝ ըստ էության, համաձայնելով այդ թեզի հետ…

Մինչդեռ Հայաստանում սեքսիզմն արգելված է և՛ Սահմանադրությամբ՝ որպես խտրականության դրսևորում, և՛ օրենքներով: Այսպես, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Արգելվում է անձի վերաբերյալ սեռի հատկանիշով պայմանավորված վիրավորական և նվաստացուցիչ հրապարակային հայտարարություն անելը, ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով»: «Գովազդի մասին» ՀՀ օրենքով (հոդված 8) արգելվում է այն գովազդը, որը պարունակում է ռասային, ազգությանը, մասնագիտությանը կամ սոցիալական ծագմանը, տարիքային խմբին կամ սեռին, լեզվին, կրոնական և այլ համոզմունքներին վերաբերող վիրավորական արտահայտություններ, համեմատություններ և պատկերներ: Այլ հարց է, որ օրենսդրական այդ արգելքները խախտելու համար որևէ պատժամիջոց չի նախատեսված, այդ իսկ պատճառով սեքսիստական բնույթի հանրային վիրավորանքները մեզանում անհետևանք են մնում, գրեթե երբեք դատական գործընթացների առարկա չեն դառնում, բացառությամբ մարդկային արժանապատվության առավել աղմկոտ խախտումների դեպքերի:

Սեքսիզմի հետ կապված ևս մեկ խնդիր կա, այն հաճախ է ընկալվում որպես նորմ, քողարկված է, հետևաբար՝ դժվար ճանաչելի: Ուստի այն նկատելն ու ճանաչելն առաջին անհրաժեշտ, բայց ոչ բավարար քայլն է, որ պետք է արվի կանանց և տղամարդկանց միջև գոյություն ունեցող անհավասարությունը նվազեցնելու ուղղությամբ: Հաջորդ և առավել կարևոր քայլը գործելն է, թե ինչպե՛ս՝ յուրաքանչյուրի ընտրությունն է, սակայն նպատակը մեկն է՝ բացառել սեքսիզմը հասարակությունում: Այս տրամաբանությամբ էլ կառուցված է սույն ձեռնարկը, որի առաջին մասը նվիրված է հանրային կյանքի տարբեր ոլորտներում սեքսիզմի դրսևորումների բացահայտմանը, իսկ երկրորդը՝ դրանց դեմ պայքարի միջոցներին և եղանակներին:

# ԳԼՈՒԽ 1.

# ՃԱՆԱՉԵՆՔ ՍԵՔՍԻԶՄԸ

## 1.1. Ի՞ՆՉ Է ՍԵՔՍԻԶՄԸ

Սեքսիզմը (անգլ.՝ sexism, լատ.՝ sexus — «սեռ») մարդկանց նկատմամբ սեռի հատկանիշով նախապաշարումների, կողմնակալ վերաբերմունքի, հակակրանքի և, նույնիսկ, թշնամանքի դրսևորում է:

Չնայած սեքսիզմը դրևորվում է նաև տղամարդկանց նկատմամբ, մասնավորապես, երբ նրանք չեն համապատասխանում գենդերային դերերի վերաբերյալ կարծրատիպային պատկերա-ցումներին, հիմնականում այդ եզրույթը օգտագործվում է կանանց նկատմամբ խտրականությունը մատնանշելու նպատակով: Ավելին, սոցիալական գիտություններում սեքսիզմը սահմանվում է որպես գաղափարախոսություն կամ սոցիալական պրակտիկաների համակարգ, որը նպաստում է հայրիշխանական նորմերի պահպանմանը՝ կանանց թիրախավորելու ու ճնշման ենթարկելու միջոցով:

Սեքսիզմը հակադրության մեջ է դնում կանանց և տղամարդկանց, ուղղակի կամ անուղղակի կերպով հաստատում մեկ սեռի գերակայությունը մյուսի նկատմամբ՝ դրանով իսկ արդարացնելով սեռերի միջև անհավասարությունը:

## Միջազգայնորեն ընդունված սահմանումները

ՄԱԿ-ի տերմինաբանական շտեմարանի[1] բնորոշմամբ՝ սեքսիզմը մի սեռի գերակայության ենթադրությունն է մյուսի նկատմամբ և դրանով պայմանավորված խտրականությունը ենթադրաբար ստորադաս համարվող սեռի հանդեպ, հատկապես տղամարդկանց կողմից կանանց նկատմամբ: Ի լրումն այդ սահմանմանը նշվում է, որ սեքսիզմը համապատասխանում է սեռերի սոցիալական դերերի մասին ավանդական կարծրատիպերին[2]:

2019 թվականի մարտին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ընդունեց անդամ պետություններին ուղղված CM/Rec (2019) Հանձնարարականը սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ[3], որի շրջանակում տրվեց սեքսիզմի միջազգայնորեն ճանաչված ընդլայնված սահմանումը:

Ըստ այդ սահմանման՝ սեքսիզմն այնպիսի գործողություն, ժեստ, տեսողական պատկեր, բանավոր կամ գրավոր խոսք, սովորույթ կամ վարքագիծ է, որը հիմնված է որևէ անձի կամ անձանց խմբի սեռով պայմանավորված ստորադաս լինելու գաղափարի վրա, և դրսևորվում է պետական կամ մասնավոր կյանքում, առցանց տիրույթում կամ համացանցից դուրս:

[1] UN terminology database
[2] https://unterm.un.org/unterm/display/record/unhq/na?OriginalId=cc45f66439373a39852569fd0006888e
[3] https://rm.coe.int/cm-rec-2019-1-on-preventing-and-combating-sexism/168094d894

Սեքսիզմն իրականացվում է հետևյալ նպատակներով կամ հանգեցնում հետևյալ ազդեցության՝

- անձի կամ անձանց խմբի արժանապատվության, իրավունքների ոտնահարում.
- անձին կամ անձանց խմբին ֆիզիկական, սեռական, հոգեբանական, սոցիալ տնտեսական վնասի պատճառում.
- վախի, թշնամական, վիրավորական, նվաստացնող կամ ագրեսիվ միջավայրի ձևավորում.
- անձի կամ անձանց խմբի անկախության և լիարժեք իրավունքների իրացման համար խոչընդոտների ստեղծում.
- գենդերային կարծրատիպերի[4] պահպանում և ամրապնդում:

Հանձնարարականի տեքստում նշվում է, որ սեքսիզմն ուղղակիորեն կապված է կանանց նկատմամբ բռնության հետ, քանի որ «ամենօրյա սեքսիզմը շարունակական բռնության մաս է հանդիսանում՝ ստեղծելով ահաբեկման, վախի, խտրականության մթնոլորտ, հասարակությունից օտարման և անապահովության զգացում»:

Ընդհանուր առմամբ, կանանց իրավունքներին վերաբերող և՛ եվրոպական, և՛ ՄԱԿ-ի հիմնարար փաստաթղթերը, հատկապես Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան[5], Պեկինի հռչակագիրն ու Գործողությունների ծրագիրը[6], դիտարկում են սեքսիզմը, խտրականությունը, կանանց նկատմամբ բռնությունը, գենդերային կարծրատիպերը և անհավասարությունը որպես փոխկապակցված երևույթներ և հասկացություններ:

## Սեքսիզմը նույնքան անհանդուրժելի է, որքան ցանկացած այլ նվաստացում

«Սեքսիզմ» եզրույթը գործածության մեջ է դրվել անցյալ դարի 60-ական թվականներին Ամերիկայում՝ ֆեմինիզմի «երկրորդ ալիքի»[7] զարգացման փուլում: Եզրույթն ստեղծվել է «ռասիզմ» բառի նմանությամբ[8]: Ինչպես և ռասիզմը, սեքսիզմը ենթադրում է գերազանցություն, այս դեպքում՝ մեկ սեռի գերազանցությունը մյուսի նկատմամբ: Սեքսիզմը կենտրոնանում է մարդկանց մի մասի (այս դեպքում՝ տղամարդկանց)՝ մյուսի (կանանց) նկատմամբ ֆիզիկական, մտավոր, ստեղծագործական և մյուս առավելությունների վրա, ընդ որում, առանց համոզիչ ապացույցների առ այն, թե տղամարդիկ «ավելի լավն են, քան կանայք» կամ հակառակը: Եթե ռասիզմը սահմանվում է որպես մաշկի գույնի հիման վրա նվաստացնող վերաբերմունք և գործողություն, ապա սեքսիզմը այնպիսի վերաբերմունք կամ գործողություն է, որի միջոցով անձը կամ խումբը նվաստացվում է սեռի հատկանիշով:

[4]Գենդերային կարծրատիպեր՝մշակույթում ձևավորված համեմատաբար կայուն, ընդհանրացված պատկերացումներ՝ կանանց և տղամարդկանց և, համապատասխանաբար, նրանց վարքի վերաբերյալ: Բառացանկ - UN in Armenia
[5]https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60505, ինչպես նաև General recommendations CEDAW https://www.ohchr.org/en/hrbodies/cedaw/pages/recommendations.aspx
[6]https://www.un.org/en/events/pastevents/pdfs/Beijing_Declaration_and_Platform_for_Action.pdf
[7]Առաջին ալիքի ֆեմինիզմը (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ) իր առջև խնդիր էր դրել օրենսդրական մակարդակում կանանց և տղամարդկանց անհավասարության հաղթահարումը (մասնավորապես, կանանց ընտրական և սեփականության իրավունքի օրենսդրորեն ճանաչումը): Երկրորդ ալիքի ֆեմինիզմը (1960-90-ական թվականներ) բարձրացնում էր դե ֆակտո անհավասարության հաղթահարման խնդիրը, այդ թվում՝ ընտանիքի, աշխատանքի, սեռականության և վերարտադրողական իրավունքների հետ կապված հարցերը:
[8]Kirsten Amundsen,"Silent majority. Women and American democracy" (1971)

## Ինչպես է արդարացվում անհավասարությունը

Սեքսիզմն արդարացնում է կանանց ստորադաս և տղամարդկանց գերադաս կարգավիճակը՝ համարելով տղամարդկանց գերակայությունը բնական, ակնհայտ, սովորական և հաստատուն, հետևաբար՝ արդար:
Այդկերպ սեքսիզմն ուղղակի կամ անուղղակի հաստատում է սեռերի միջև տնտեսական, սոցիալական և քաղաքական անհավասարությունը՝ բացատրելով այն բնությունից տրված տարբերություններով:
Կանանց նկատմամբ սեքսիստական վերաբերմունքը և հայտարարություններն ընկալվում են որպես նորմ, դառնում սովորական, բոլորի կողմից ընդունված և հաճախ չեն էլ նկատվում: Օրինակ՝ կանանց ստեղծագործական կամ ղեկավար ունակությունները կասկածի տակ դնող՝ «կանացի տրամաբանության» և «կանանց հուզական անկայունության» մասին տխրահռչակ փաստարկները և վկայակոչումներն ամուր ներդրված են հասարակության գիտակցության մեջ:

## Հիմքում գենդերային կարծրատիպերն են

Սեքսիզմը սերտորեն կապված է գենդերային կարծրատիպերի հետ, քանի որ խտրական գործողությունները կամ փոխհարաբերությունները հաճախ հիմնված են ենթագիտակցության մեջ ամրացված կողմնակալ համոզմունքների կամ ընդհանրացումների վրա:

> Ըստ Եվրոպայի խորհրդի սահմանման[9], գենդերային կարծրատիպերը բնորոշվում են որպես կողմնակալ բնույթի սոցիալական և մշակութային մոդելներ կամ գաղափարներ, որոնցով կանանց և տղամարդկանց վերագրվում են իրենց սեռով սահմանված և սահմանափակված բնութագրեր և դերեր:

Գենդերային կարծրատիպերը կարող են սահմանափակել աղջիկների և տղաների, կանանց և տղամարդկանց բնական տաղանդների և կարողությունների զարգացումը, նրանց կրթական և մասնագիտական նախասիրությունները և փորձը, ինչպես նաև ընդհանուր առմամբ կյանքի հնարավորությունները:

Կարծրատիպերը վերագրում են կանանց և տղամարդկանց ոչ միայն սահմանափակ, այլև հակադրվող որակներ. մասնավորապես, տղամարդկանց վերագրվում են հատկություններ, որոնք կապված են ուժի, ակտիվ գործունեության, իշխանության և գերակայության հետ, իսկ կանանց՝ ենթակայության, թուլության և պասիվության հետ: Ընդ որում, տղամարդկանց մասին նույնիսկ բացասական կարծրատիպերը, օրինակ՝ նրանց վերագրվող եսասիրությունը և ամբարտավանությունը, աշխատում են հօգուտ տղամարդկային գերիշխանությունը պահպանելուն, քանի որ դրանք կապված են իշխանության ձգտելու կամ այն պահելու հետ: Այդկերպ գենդերային կարծրատիպերը բացատրում և ամրապնդում են ավանդական դերերին բնորոշ անհավասարությունը՝ հիմք հանդիսանալով գենդերային խտրականության[10] համար:

[9] Եվրոպայի խորհուրդ, Գենդերային հավասարության ռազմավարություն 2018-2023 թթ. (Ռազմավարական նպատակ 1), https://rm.coe.int/strategy-en-2018-2023/16807b58eb:
[10] **Գենդերային խտրականություն (ուղղակի, անուղղակի)**՝ սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը: Ըստ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841
[11] Միզոգինիա (կնատյացություն) - գաղափարների և տրամադրությունների համակազմ, որը հատուկ է որոշ տղամարդկանց և արտահայտում է կանանց սեռի նկատմամբ արհամարհանք և ատելություն: Կանանց ներկայացվող մեղադրանքներից են՝ թեթևամտությունը, մտավոր հետաքրքրությունների բացակայությունը, խորամանկությունը, նենգությունը, ագահությունը և այլն: Տղամարդկանց վերագրվող բացասական հատկանիշների գրեթե նույն համախումբը բնորոշվում է միզանդրիա (տղամարդատյացություն) եզրույթի միջոցով: Բառացանկ - UN in Armenia

# Թշնամական և «բարյացակամ» սեքսիզմ

Սեքսիզմը իր մեջ է ներառում կանանց արժեզրկման տարբեր ձևեր ու տեսակներ, հետևապես, սեքսիզմի դրսևորումների տարբեր դասակարգումներ կան: Օրինակ՝ հաճախ սեքսիզմը բաժանում են երեք տեսակի՝ թշնամական, «բարյացակամ» և երկակի/ամբիվալենտ:

**Թշնամական սեքսիզմը** բնութագրվում է կանանց անլիարժեքության մասին բացահայտ պնդումներով, հանգեցնում է ծայրահեղ դրսևորումների՝ կնատյացության[11] ու ատելության խոսքի[12]:

**«Բարյացակամ» սեքսիզմն** արտահայտվում է կանանց որպես հոգատար, զգայուն, թույլ և տղամարդկանց պաշտպանության կարիքն ունեցող էակների ներկայացմամբ, ինչը կանանց երբեմն կարող է հաճելի թվալ:

Եթե թշնամական սեքսիզմը կանանց մեջ վրդովմունք և դրան դիմակայելու ցանկություն է առաջացնում, ապա «բարյացակամ» սեքսիզմին ընդդիմանալը շատ ավելի դժվար է, քանի որ կանայք հաճախ ընկալում են հաճոյախառն կարծրատիպերն ու պրակտիկաները որպես արտոնություն: «Բարյացակամ» սեքսիզմը բավականին դժվար է ճանաչել: Օրինակ՝ տղամարդիկ հաճախ արդարացնում են որոշումների կայացման մակարդակում կանանց ցածր ներկայացվածությունը կանանց նկատմամբ հոգատարությամբ, ծանր բեռից ու պատասխանատվությունից նրանց զերծ պահելու ցանկությամբ՝ պնդելով, թե «քաղաքականությունը կեղտոտ գործ է», և կանանց պետք է պաշտպանել դրանից: Մինչդեռ կանանց նկատմամբ նման «ասպետական» հոգատարության արդյունքում արգելափակվում է կանանց մուտքը քաղաքականություն և դեպի ավանդաբար տղամարդկանց կողմից զբաղեցվող պատասխանատու պաշտոններ:

«Բարյացակամ» սեքսիզմը անհավասարությունը պահպանելու ավելի արդյունավետ միջոց է համարվում, քան ուղղակի նվաստացումը կամ թշնամությունը: Սակայն սեքսիզմի երկու տեսակներն էլ՝ և՛ թշնամականը, և՛ «բարյացակամը», թեև տարբեր կերպ, բայց արդարացնում են տղամարդկանց գերիշխանությունը: Եթե «բարյացակամ» սեքսիզմը խրախուսում է կանանց հնազանդվելու իրենց գենդերային դերին և հասարակության սահմանած նորմերին, ապա թշնամական սեքսիզմն օգտագործվում է որպես պատժամիջոց այն կանանց նկատմամբ, որոնք չեն ենթարկվում իրենց սահմանված գենդերային դերերին՝ վիճարկելով տղամարդկային գերիշխանությունը:

Գործնականում սեքսիզմի այս երկու տեսակները կարող են միաժամանակ կիրառվել տարբեր կանանց նկատմամբ, և նման պրակտիկան անվանում են ամբիվալենտ սեքսիզմ:

Օրինակ՝ երբ դիմելով որևէ կնոջ տղամարդիկ նկատում են, որ նա, ի տարբերություն այլ կանանց, տղամարդու նման սուր միտք ունի:

[12]Ատելության խոսք, հանրային (հասարակական) խոսքի դրսևորում, որն արտահայտում է ատելություն կամ խրախուսում է բռնություն անձի կամ անձանց խմբի նկատմամբ՝ պայմանավորված այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են անձի ռասան, սեռը, կրոնական պատկանելությունը, էթնիկական խումբը, գենդերային ինքնությունը, մաշկի գույնը, սեռական կողմնորոշումը, հաշմանդամությունը և այլն: «HATE SPEECH | meaning in the Cambridge English Dictionary»

# Սեքսիզմն ամենուր է…

Սեքսիզմն առկա է կյանքի բոլոր ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության մեջ, ԶԼՄ-ներում, արվեստում, լեզվում, կենցաղում, նույնիսկ վիրտուալ տարածքում: Սեքսիզմը դրսևորվում է երեք մակարդակներում՝ անհատական, ինստիտուցիոնալ (օրինակ՝ ընտանիքում, աշխատանքային կամ կրթական միջավայրում) և կառուցվածքային (օրինակ՝ սոցիալական նորմերի և վարքագծի կանոնների միջոցով)[13]: Բոլոր մակարդակներում սեքսիզմի հիմքում ընկած է մի սեռի թերարժևորումը մյուսի նկատմամբ կամ որևէ սեռի նկատմամբ կանխակալ վերաբերմունքը, ինչը շարունակական բնույթ է կրում:

**Անհատական մակարդակում** սեքսիզմը դրսևորվում է անհատի ընկալումներում, խոսքում, գործողություններում, վարքագծում առկա կանխակալ վերաբերմունքով, որը հիմնված է այս կամ այն սեռին վերագրվող հատկանիշների մասին կարծրատիպային պատկերացումների վրա:

**Ինստիտուցիոնալ մակարդակում** սեքսիզմը արտահայտվում է սոցիալական ինստիտուտներում բացահայտ խտրական կանոններով կամ չգրված նորմերով ներդրված գենդերային անհավասարությամբ: Կարող է արտահայտվել, օրինակ՝ կանանց նկատմամբ սահմանափակող օրենքներով, աշխատավարձերի տարբերությամբ, բարձր պաշտոններում ներկայացվածության տարբերությամբ, խտրական գործելաոճով և այլ ձևերով:

**Կառուցվածքային մակարդակում** սեքսիզմը դրսևորվում է տվյալ հասարակությանը բնորոշ սոցիալական նորմերի, կանանց ու տղամարդկանց վերագրվող վարքագծի կանոնների միջոցով, որոնք իրենց արտահայտությունն են ստանում կենցաղում, սովորույթներում, ավանդույթներում, ասացվածքներում, սոցիալական հարաբերությունների տարբեր ոլորտներում:

Կանայք ու տղամարդիկ կարող են ենթարկվել նաև սեքսիզմի՝ խտրականության այլ ձևերի հետ հատվող դրսևորումների: Մասնավորապես, սեքսիզմը կարող է հատվել էթնիկ կամ ազգային պատկանելությամբ, հաշմանդամությամբ, ընտանեկան դրությամբ, տարիքով, կրոնով, փախստականի կարգավիճակով, սեռական կողմնորոշմամբ և այլ գործոններով պայմանավորված խտրականության հետ՝ դարձնելով անձի իրավիճակն էլ ավելի խոցելի: Օրինակ՝ աշխատանքային հայտարարություններում հաճախ կարելի է հանդիպել միաժամանակ և՛ սեքսիզմ, և՛ էյջիզմ (տարիքային խտրականություն) պարունակող նախապայմաններ. «Պահանջվում են բարետես, մինչև 25 տարեկան աղջիկներ»:

Կանանց որոշ խմբեր, այդ թվում, օրինակ՝ կին քաղաքական գործիչները, կին լրագրողները, կին իրավապաշտպանները և երիտասարդ կանայք, կարող են հատկապես խոցելի լինել սեքսիզմի դրսևորումների նկատմամբ: Հիմնականում սեքսիզմի թիրախում են հայտնվում այն կանայք, որոնք իրենց գործունեության բնույթով կամ ակտիվությամբ դուրս են կնոջ դերի և տեղի մասին հասարակության մեջ ընդունված կարծրատիպային պատկերացումներից:

[13]Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec (2019) Հանձնարարական https://rm.coe.int/cm-rec-2019-1-on-preventing-and-combating-sexism/168094d894

## «Մենսփլեյնինգ», թաքնված, ներքնայնացված սեքսիզմ

Տեսության մեջ առանձնացվում են սեքսիզմի տարբեր տեսակներ:

Օրինակ՝ սեքսիզմի սահմանային ենթատեսակն է **«մենսպլեյնինգը»** (անգլ.՝ man — տղամարդ, explaining —բացատրություն), երբ տղամարդիկ անլուրջ են վերաբերվում կնոջ կողմից արտահայտվող ցանկացած կարծիքի կամ փորձում են ճնշել այդ կարծիքը՝ կասկածի տակ դնելով կանանց մտավոր ունակությունները և ցուցադրաբար բացատրական աշխատանք կատարելով

**Թաքնված սեքսիզմ** է համարվում ժխտողական դիրքորոշումը սեքսիզմի կամ կանանց նկատմամբ խտրականության վերաբերյալ: Օրինակ՝ թաքնված սեքսիզմին բնորոշ են հետևյալ հայտարարությունները. «Ժամանակակից հասարակության մեջ կանանց նկատմամբ խտրականություն այլևս գոյություն չունի», «Կանայք անհրական պահանջներ են ներկայացնում հավասարության առումով», «Վերջին տարիներին կանայք չափից ավելի իրավունքներ են ստացել» կամ «Հայ կինը միշտ բարձր դիրք է զբաղեցրել» և այլն:

Լայն տարածում ունի նաև **ներքնայնացված սեքսիզմը,** որով բնորոշվում է կանանց այնպիսի պահվածքը, երբ նրանք անգիտակցաբար վերարտադրում և տարածում են սեփական սեռի նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերը՝ ընկալելով դրանք որպես ճշմարտություն/նորմ: Ներքնայնացված սեքսիզմն է պատճառը, որ կանայք քննադատաբար են վերաբերվում հաջողակ կամ այն կանանց, որոնք չեն տեղավորվում «նորմալ կնոջ» մասին իրենց պատկերացումների մեջ՝ դրանով իսկ կասկածի տակ դնելով կանանց ներուժն ու հաջողության հասնելու հնարավորությունները: Օրինակ՝ ակտիվ կին քաղաքական գործիչների հասցեին քննադատությունը և նույնիսկ ատելության խոսքը հաճախ կանանց կողմից է հնչեցվում: Նաև կանայք հաճախ փորձում են բարձրացնել իրենց սոցիալական կարգավիճակը՝ ընդգծված շեշտադրելով, որ ի տարբերություն իրենց սեռի մյուս ներկայացուցիչների՝ իրենք չունեն կանանց ավանդաբար վերագրվող թերություններ:

Երբ բռնաբարության զոհերի մասին մեկնաբանություններում որոշ կանայք գրում են՝ «ինքն էր մեղավոր, հիմարը», դա էլ է ներքնայնացված սեքսիզմ: Միաժամանակ սեքսիզմի այդ դրսևորումը նաև **«վիկտիմբլեյմինգ»** (Victim- զոհ,  blaming- մեղադրանք) է կոչվում: Հասարակության մեջ բավականին տարածված զոհին մեղադրող և բռնաբարությունը, ըստ էության, արդարացնող այս դիրքորոշման համաձայն՝ տուժող կողմը պատասխանատվություն է կրում հանցագործության համար, քանի որ հրահրել է բռնարարին այս կամ այն կերպ, օրինակ՝ կարճ շրջազգեստ հագնելով:

# ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՔՍԻԶՄԸ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Հանրային խոսքում սեքսիզմը մեծապես վերարտադրվում և ուժեղացվում է ինչպես ավանդական լրատվամիջոցների, այնպես էլ՝ սոցիալական ցանցերի միջոցով:

Հանրային գրավոր և բանավոր խոսքում գենդերային հավասարության սկզբունքները ապահովելու փորձի առումով օրինակելի են ՄԱԿ-ի ներսում գործող կարգավորումները:

Մասնավորապես, ՄԱԿ-ի վեց պաշտոնական լեզուներով լույս տեսած «Հանրային գրավոր և բանավոր խոսքում գենդերային առանձնահատկությունները հաշվառելու մասին» ուղեցույցը[14] և այլ մեթոդական ձեռնարկները[15], որոնք հասցեագրված են կազմակերպության աշխատակիցներին, նպատակ ունեն բացառելու սեռի հիմքով խտրականության դրսևորումները տարբեր պայմաններում՝ բանավոր և գրավոր խոսքում, պաշտոնական և ոչ ֆորմալ միջավայրում, ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ հանրության լայն շրջանակի հետ շփվելիս: Գենդերային զգայուն բառամթերք օգտագործելու այդ պարտադրանքի հիմքում «Գենդերային հավասարության հասնելու ՄԱԿ-ի համակարգային ռազմավարությունն»[16] է, որով կազմակերպությունը պարտավորություն է ստանձնել բացառելու գենդերային խտրականությունն իր բոլոր կառույցների ընթացակարգերում և գործողություններում:

ԶԼՄ-ներին վերաբերող փաստաթղթերի առումով հատկանշական է, որ վերջին տարիներին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) մի քանի բանաձև է ընդունել լրատվամիջոցներում գենդերային հավասարության և կանանց կերպարի վերաբերյալ, այդ թվում՝ առնվազն երկու հատուկ բանաձև նվիրված է սեքսիզմի դրսևորումներին՝

- Թիվ 1751 (2010) բանաձևը՝ «ԶԼՄ-ներում սեքսիստական կարծրատիպերի դեմ պայքարը»[17]
- Թիվ 1557 (2007) բանաձևը՝ «Կնոջ կերպարը գովազդում»[18]: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն երեք բանաձևերով է անդրադարձ կատարել ԶԼՄ-ներում սեքսիզմի խնդիրներին՝
- CM / Rec (2013) 1 «Գենդերային հավասարության և լրատվամիջոցների մասին»[19]
- CM / Rec (2017) 9 «Տեսալսողական ոլորտում գենդերային հավասարության մասին»[20] հանձնարարականներով՝
- CM / Rec (2019) 1 «Սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ» բանաձևով[21]:

Լրատվամիջոցների պատասխանատվության շրջանակը սեքսիզմը վերարտադրելու հարցում երկու հիմնարար խնդիր է ներառում:

Առաջին՝ կանայք լրատվամիջոցներում թերի են ներկայացվում և ինչ-որ չափով «անտեսանելի» են, երկրորդ՝ խոսքի ազատության հովանու ներքո լրատվամիջոցները վերարտադրում են այնպիսի դիրքորոշումներ ու տեսակետներ, որոնք բացահայտ սեքսիստական բնույթ ունեն՝ դրանով իսկ ամրապնդելով գենդերային անհավասարությունը հասարակության մեջ:

[14] Guidelines for gender-inclusive language https://www.un.org/en/gender-inclusive-language/guidelines.shtml
[15] Toolbox for using gender-inclusive language https://www.un.org/en/gender-inclusive-language/toolbox.shtml
[16] United Nations System-wide Strategy on Gender Parity https://www.un.int/sites/www.un.int/files/Permanent%20Missions/delegate/17-00102b_gender_strategy_report_13_sept_2017.pdf
[17] http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=17893&lang=en
[18] https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17552&lang=en
[19] https://go.coe.int/OWWun
[20] https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016807509e6
[21] https://rm.coe.int/cm-rec-2019-1-on-preventing-and-combating-sexism/168094d894

# Սեքսիստական հումորից մինչև ատելության հրահրում

ՁԼՄ-ներում սեքսիզմի դրսևորումները տատանվում են հեռուստաեթերում գռեհիկ սեքսիստական հումորից մինչև սոցիալական ցանցերում սեռի հիման վրա ատելության հրահրում: Եվրոպայի խորհրդի փորձագետների գնահատականներով[22], սեքսիստական բնույթի ատելության խոսքը հետևյալ բնութագրիչներն ունի՝

- թիրախում հիմնականում կանայք են.
- հետապնդման են ենթարկվում կոնկրետ կանայք.
- բռնության կոչերն արտահայտվում են սեռական բնույթի սպառնալիքների և արժանապատվությունը նվաստացնող ձևերով:

Սեքսիզմի նման դրսևորումները անհետևանք են մնում, նույնիսկ ակնհայտ վիրավորանքների թիրախում հայտնված անհատները բողոքներ չեն ներկայացնում՝ համոզված չլինելով, որ դրանք լուրջ կընդունվեն և ընթացք կստանան:

***

Միջազգային հանձնարարականներով սեքսիզմի դրսևորումները հաղթահարելու ուղղությամբ առաջարկվող գործողությունները ներառում են, մի կողմից՝ օրենսդրական բարեփոխումներ, որոնք դատապարտում են սեքսիզմը, նույնականացնում և քրեականացնում են սեքսիստական բնույթի ատելության խոսքը, ապահովում պաշտպանություն սեքսիստական վարքագծից տուժած անձանց համար, մյուս կողմից՝ վարչական և ինքնակարգավորող գործիքների կիրառում, համապատասխան ծրագրերի և քաղաքականության մշակում:
Այդուհանդերձ, նշված գործողությունների արդյունավետություն ապահովելու անհրաժեշտ նախապայմանը սեքսիզմի դրսևորումների մասին հանրության լայն շրջանակների իրազեկվածության բարձրացումն է: Ակնհայտ է, որ ցանկացած բացասական երևույթի կամ գործելաոճի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է առնվազն ճանաչել այն...

[22] Background note on sexist hate speech https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168059ad42

# ԲԱՑԱՀԱՅՏԵՆՔ ՍԵՔՍԻԶՄԸ

## Որտե՞ղ և ինչպե՞ս է դրսևորվում սեքսիզմը




Սեքսիզմը գրեթե ամենուր է: Այն դրսևորվում է մեր ամենօրյա բառապաշարում, գրավոր խոսքում, հանրային տարածքներում և մարդկանց վարքագծում:




Սեքսիստական արտահայտություններ կամ պատկերներ հայտնաբերելու ամենապարզ ձևը սեռերի փոխատեղումն է: Եթե կնոջ փոխարեն տղամարդուն (և հակառակը) դնելու պարագայում պարզվում է, որ տեղի է ունենում բովանդակության կամ իմաստի այնպիսի փոփոխություն, որը կարող է խտրական կամ վիրավորական թվալ, ուրեմն գործ ունենք սեքսիզմի դրսևորման հետ:

Այդկերպ ավելի տեսանելի է դառնում սեքսիզմի խորքային էությունը, որը կայանում է կանանց նկատմամբ խտրականության ու ստորադասման, ինչպես նաև հայրիշխանության ամրապնդման մեջ: Ու թեև հանդիպում են նաև սեքսիստական արտահայտություններ՝ ուղղված տղամարդկանց, սակայն հաճախ թիրախում կրկին կանանց ստորադասումն ու խտրականությունն են: Օրինակ՝ հաճախ տղամարդուն անհատապես վիրավորելու համար համեմատում են կնոջ հետ՝ ասելով. «դու հո կին չե՞ս» և դրանով իսկ ընդգծելով, որ կին լինելը թուլության կամ որևէ այլ ամոթալի դրսևորում է:

## Դրսևորվում է.

### Ինստիտուցիոնալ մակարդակում.

- Ընտանեկան որոշումների կայացման հարցում կնոջ ցածր հեղինակություն և ազդեցություն:
- Տղա երեխայի նախընտրություն և, որպես հետևանք, պտղի սեռով պայմանավորված հղիության շարիեստական ընդհատումներ:
- Ընտանեկան պարտականությունների անհավասար բաշխում, կանանց ավելի մեծ ծանրաբեռնվածություն տնային չվճարվող աշխատանքով:
- Ընտանեկան բռնություն՝ որպես կանանց նկատմամբ սեքսիզմի և խտրականության առավելծայրահեղ դրսևորում:

### Անհատական և կառուցվածքային մակարդակում.

- Կանանց նկատմամբ խտրական բնույթի ասացվածքների ու արտահայտությունների օգտագործում կենցաղային կյանքում:
- Աղջիկ երեխաների նկատմամբ խտրական վերաբերմունք, մանկուց հայրիշխանական համակարգին համապատասխանեցված պահանջների ներկայացում, աղջիկների նկատմամբ կարծրատիպային բնույթի սահմանափակումների կիրառում:







MediaLab.am

**Կանանց նկատմամբ խտրականության և կանանց ստորադասման նորմալացում՝ ասացվածքներում և դրսևորումները կենցաղում**

*«Կնգա բերած փողը դռան զանգակ ա, անց ու դարձ անելիս ճակատիդ կդիպչի»:*

*«Լավ կինը ամուսնու խոսքին չի հակառակվի»:*

*«Ո՞նց են հիմա շապերը կին ընտրում: «Լավ աղջիկ» պետք ա լինի, որը նշանակում ա՝ հնազանդ, չհակաճառող, տղամարդու ամեն մի քմահաճույքը բավարարող: Բայց կինը նրանով չի լավը, որ լուռ պետք ա հանդուրժի տղամարդու տրամադրության ցանկացած փոփոխում» (Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ):*

*«Կինը պետք է լռի, որ հանդարտեցնի մթնոլորտը» (Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ)*[23]*:*

**Կանանց նկատմամբ բռնության նորմալացում՝ ասացվածքներում և դրսևորումները կենցաղում**

*«Մարդի ծեծած, վարդի ծեծած»:*

*«Ով չի ծեծել իր կնկանը, վայ կտա իր ծնկանը»:*

*«Թե կնգան ծեծում ես. թե փախնում, փան անկյունն ա մտնում, ուրեմն կնիկ կդառնա, թե դուրս ա փախնում, ուրեմն՝ չի դառնա»:*

*«Արհամարհանքը, անտեսումը, շարունակական վիրավորանքը շատ ավելի ճնշող են, քան խփելը»: «Դու ի՞նչ մայր ես, ի՞նչ կին ես... Սրանից դաժան էլ ի՞նչ կարող է լինել...» (Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ):*

*«Մեզ մոտ ինչպե՞ս է. տղամարդը պետք է ծեծով ապացուցի, որ ինքը տղամարդ է: Կինը հանգիստ ընդունում է, որ իր տեղը խոհանոցն է»*[24]*:*

*«Ամուսինս ինձ հղի վիճակում մեկ ոտքի վրա էր կանգնեցնում ու դրանով զվարճանում էր: Ես լացում էի, ասում էի՝ ի՞նչ եմ արել, ինչո՞ւ ես կանգնացրել: Ասում էր՝ «էդ էր պակաս, բան արած լինեիր, կինս ես, պետք է ասեմ՝ անես» (գ. Մրգանուշ, ամուսնալուծված կին)*[25]*:*

**Կանանց անհավասար մասնակցությունը ընտանեկան որոշումներին**

*«Շրջապատը խանգարում է, որպեսզի ընտանիքն ինքնուրույն որոշումներ կայացնի: Հաճախ ես լսում. «Դու ի՞նչ տղամարդ ես, որ թույլ ես տալիս կինդ որոշի...» (Երևան, երիտասարդ կանանց խումբ):*

*«Տղամարդիկ միշտ կարծում են, որ իրենք են ամենաճիշտը, ու հաշվի չեն առնում կնոջ ասածը, օրինակ՝ միասին չեն քննարկում, թե ինչ կարելի է ցանել» (Լուսակերտ, կանանց խումբ)*[26]*:*

---

[23] Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված հետազոտություն, 2017թ. http://www.un.am/up/library/Perceptions-attitudes-and-practices-regarding-domestic-violence-in-Armenia_Reserach_Arm.pdf

[24] Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված հետազոտություն, 2017թ. http://www.un.am/up/library/Perceptions-attitudes-and-practices-regarding-domestic-violence-in-Armenia_Reserach_Arm.pdf

[25] «Խոսելով կանանց հետ ընտանեկան բռնության մասին» հետազոտություն, 2017թ. http://socioscope.am/wp-content/uploads/2019/01/2017_Final-Report_on_violence.pdf

[26] Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված հետազոտություն, 2017թ. http://www.un.am/up/library/Perceptions-attitudes-and-practices-regarding-domestic-violence-in-Armenia_Reserach_Arm.pdf

*«Իմ ընկանիքում ճիշտը էն է, որ ինքն է անում: Ես լավ գիտեմ իմ ամուսնու բնավորությունը, ավելի լավ ա՝ իրա ձեռքը լինի: Ես ծախսող չեմ, բայց ավելի լավ ա ինքը, որովհետև ինքը գիտի՝ ինչ ձև փողը ղեկավարի: Ինչ-որ ժամանակ կիսուրի մոտ է եղել, 3-4 տարի կլինի, որ ամուսինս ա» (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած):*

*«Որ մենք ուզում ենք տավար ծախենք, իմ ամուսինը կծախի, գումարը կվերցնի, էդ գումարը կաշխատացնի մենակ ինքը, մենք չենք խառնվի: Կիսուրս կարող ա հարցեր տա, բայց մեկը ես՝ չեմ խառնվում: Հիմնականում փողը իրա ձեռքն ա» (Դրախտիկ, իգ., 33 տ., ամուսնացած»[27]:*

**Աղջիկ երեխաների հանդեպ խտրականություն և վերահսկողական վարք, տղա երեխաներին տրվող արտոնություններ**

*«...Դրվածքը հենց մանկապարտեզից, դպրոցից է՝ դու աղջիկ ես, նա՝ տղա, և աղջիկ-տղա տարբերությունը շատ է դրվում: Սկզբից պետք է հավասար սկզբունքների վրա դրվի, որ հետագայում այդ անհավասարությունները չլինեն» (գ. Մրգանուշ, ամուսնալուծված կին)[28]:*

*«Տղային ու աղջկան վաղ մանկությունից տարբեր են դաստիարակում: Տղային ասում են՝ դու ուժեղ պիտի լինես, խելացի, աղջկան՝ գեղեցիկ, խնամված: Տղային՝ ամեն ինչ, նրան պատրաստում են լայն հնարավորությունների համար, աղջկան՝ կոնկրետ դերերի՝ կին, մայր»[29]:*

*«Մեր տանը հաճախ են ինձ ասում՝ եղբորդ համար ջուր բեր, ճաշ լցրու, բայց հակառակը երբեք չեն ասի: Մի քանի անգամ բողոքել եմ, մամաս ասում է, որ դրա մեջ վատ բան չկա, ինքն էլ իր եղբայրների համար է հաճախ ջուր տարել: Ես դեմ չեմ ջուր տանելուն, բայց մեկ-մեկ էլ թող հակառակը լինի» (Մարիա, 14 տարեկան):*

*«Տղաները վերահսկում են աղջիկներին, և դա դուր է գալիս նրանց, քանի որ մտածում են, որ դա սիրո արտահայտում է: Նման վերահսկողությունը վկայում է, որ ապագայում բռնություն է կիրառվելու»:*

**Տղա երեխայի նախապատվություն ու պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ**

*«ԷԽՕ-ն սեռը ցույց տվեց աղջիկ, երկու աղջիկ արդեն ունեինք, ամուսինս չէր ուզում, որոշեցինք հանել: Գնացի Երևան, հանեցինք, հետո բժիշկները եկան, ասեցին, որ երեխեն տղա էր: Երկու անգամ էդպես էղավ»[30]:*

*«Կիսուրս դարդի մեջ էր, ասում էր՝ տունս քանդիր, օջախս ցամքըցավ: ԷԽՕ-ն հլը բան ցույց չէր տալի, սկեսուրս ջոկել էր, սիրտը վկայում էր, որ աղջիկ ա, իսկ ես արդեն անուն էի որոշել... չթողին ծնվի»:*

*«Ամուսինս որ իմացավ աղջիկ ա, ասեց՝ հիմա երրորդ աղջկա վախտը չի, կհանես: Ինձ էրկու աղջիկն էլ ծով ա, տղա ա պետք, տղա չես կարում բերես, ուրեմն՝ հանի: Դրանից մի շաբաթ հետո աբորտ արեցի»:*

[27]Առօրյայի անտեսանելի կողմը. Գենդերային կարծրատիպերը կենցաղում, 2018թ. https://www.wvi.org/sites/default/files/AM%20partners%20research%20Armenian.pdf
[28]«Խոսելով կանանց հետ ընտանեկան բռնության մասին» հետազոտություն, 2017թ. http://socioscope.am/wp-content/uploads/2019/01/2017_Final-Report_on_violence.pdf
[29]WomenNet.am https://bit.ly/2zGR3HB
[30]Հայաստանում սելեկտիվ աբորտները շարունակում են մտահոգիչ մնալ https://medialab.am/22962/

# ԻՆՉ ԵՆ ՓԱՍՏՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ամեն տարի Հայաստանում չի ծնվում 1400 և ավելի աղջիկ: Մինչև 2060 թ. Հայաստանում չի ծնվի գրեթե 93.000 աղջիկ, եթե սեռով պայմանավորված հղիության ընդհատումների կամ մինչև ծննդաբերությունը երեխայի սեռի ընտրության միտումը շարունակի մնալ անփոփոխ»[31]:

«Ընտանիքում տղա կամ աղջիկ երեխաների նախապատվությանը վերաբերող հարցի պատասխանների վերլուծությունը ցույց տվեց, որ հայ ընտանիքներում 6 անգամ ավելի հաճախ նախապատվությունը տրվում է տղաներին՝ աղջիկների համեմատությամբ (համապատասխանաբար 64.7% և 11.8%), և միայն հարցվածների 23.5%-ն էր նշել չեզոքություն սեռի հարցում»[32]:

[31]«Հանրային հետազոտություն Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ» զեկույց, 2016թ. http://www.un.am/up/library/Report_Sexual_Reproductive_Rights_ARM.pdf

[32]«Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» զեկույց, 2011թ. http://www.un.am/up/library/Sex-selective%20abortions_arm.pdf

## Դրսևորվում է.

### Ինստիտուցիոնալ մակարդակում.

- Աշխատանքի շուկայում ուղղահայաց (կարիերայի աճի խոչընդոտներ) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և ոլորտների) խտրականություն կանանց նկատմամբ:
- Կանանց ներուժի թերի ներգրավումն աշխատաշուկայում՝ կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների, այդ թվում՝ աշխատանքը և ընտանիքը համատեղելու հնարավորությունների պակասի կամ բացակայության պատճառով:
- Կանանց և տղամարդկանց աշխատավարձերի տարբերություն՝ պայմանավորված աշխատանքի շուկայում գոյություն ունեցող ուղղահայաց և հորիզոնական խտրականությամբ:
- Կանանց կողմից կատարվող չվարձատրվող՝ տնային և ընտանիքի անդամների խնամքի հետ կապված ավելի մեծ աշխատանքը:

### Աշխատանքային հարաբերություններում.

- Խտրական բնույթի աշխատանքի հայտարարություններ, աշխատավայրում կանանց նկատմամբ սեռական ոտնձգություններ,[33] կարիերայի աճին խոչընդոտող «ապակյա առաստաղ»,[34] «կպչուն հատակ»[35] և այլ դրսևորումներ:













[33]«Սեռական ոտնձգություն՝ գենդերային խտրականության դրսևորումների տեսակ՝ խոսքային կամ ֆիզիկական դրսևորում ունեցող սեռական բնույթի գործողություններ կամ ցանկացած իրավիճակ, որոնք ուղղված են անձի արժանապատվությունը նվաստացնելուն, վախեցնելուն, թշնամությանը, ստորացմանը կամ նմանատիպ իրավիճակներին», «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք, հոդված 3, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841

[34]«Ապակե առաստաղ» (glass ceiling) եզրույթով բնութագրվում է մասնագիտական աճի որոշակի աստիճանը, որից բարձր կինը գործնականորեն հնարավորություն չունի զարգանալու, ընդ որում, այդ սահմանը ոչ մի կերպ ֆորմալացված չէ: Accenture. The Anatomy of the Glass Ceiling Barriers to Women΄s Professional Advancement. New York. 2006

[35]«Կպչուն հատակ» արտահայտության միջոցով բնութագրում են մասնագիտական առաջընթացի խոչընդոտները՝ պայմանավորված կնոջ ցածր ինքնագնահատականով:

**Աշխատանքի հայտարարություններում ոչ մասնագիտական պահանջների ներկայացում**

«Պահանջվում են 25 տարեկան բարետես, հմայիչ, գրավիչ… արտաքինով երիտասարդ աղջիկներ… ցանկալի է՝ հաստ շուրթերով», «… ունենալ ներկայանալի արտաքին, լինել ազատ, առանց կոմպլեքսների»:

«Պահանջվում է աշխատանքային փորձով գործավար - տնօրենի օգնական: Պահանջները՝ կիրթ, խելացի, աշխատասեր, պարտաճանաչ և հաճելի արտաքին տվյալներով… Առանձնահատուկ խնդրանք. հարգելի՛ դրակոններ, խնդրում ենք՝ այս անգամ մեզ մի՛ անհանգստացրեք. Տնօրինություն»[36]:

**Աշխատանքի ընդունվելիս ընտանեկան կարգավիճակի և երեխաների պլանավորման հետ կապված անհարկի հարցեր**

«Աղջիկներին աշխատանքի ընդունվելիս հարցնում են. «չե՞ս պատրաստվում ամուսնանալ կամ երեխա ունենալ», դրանով իսկ շեշտադրելով, որ ամուսնության ու երեխա ունենալու պատճառով կինը դառնում է ոչ ձեռնտու աշխատող»[37]:

**Կնոջ համար «իդեալական աշխատանքի» մասին կարծրատիպային պատկերացումներ, մասնագիտության ազատ ընտրության սահմանափակումներ**

«Իմ ծնողների խորհրդով եմ ընդունվել մանկավարժական ինստիտուտ: Ես շատ էի ուզում թատերական ինստիտուտ ընդունվել, բայց մայրս միշտ ասում էր, որ դա աղջկա տեղ չի, որ աղջիկը պետք է ընդունվի մանկավարժական, դառնա մանկավարժ» (հարցվող, Գավառ):

«Մասնագիտությամբ մանկաբարձուհի եմ, սակայն երբեք այդ ոլորտում չեմ աշխատել: Մասնագիտությունս մորս ցանկությամբ եմ ընտրել, ես առանձնապես չեմ սիրել մանկաբարձուհու գործը: Ես ավելի շատ սիրում էի պարել, ուզում էի ընդունվել պարարվեստի ուսումնարան, բայց մայրս դեմ էր: Ես էլ լսեցի նրան ու դարձա բուժքույր: Եթե նորից ընտրելու հնարավորություն լիներ, հաստատ կընտրեի իմ ցանկությամբ» (հարցվող, Գավառ)[38]:

[36]List.am և այլ գովազդային կայքերի հայտարարություններից. http://womennet.am/hajtararutyun/; http://womennet.am/baretes-ashchatanq/
[37]ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության անցկացրած հետազոտությունից, 2016 թ. http://womennet.am/work/
[38]«Սեռական բնույթի հետապնդումները աշխատավայրում որպես կանանց մասնագիտական առաջընթացը խոչընդոտող գործոն» հետազոտություն, 2015թ. http://www.ysu.am/files/Nvard%20Melkonyan%20and%20Yuliana%20Melkumyan-arm.pdf

## Մասնագիտական պարտականությունների կատարման ժամանակ կնոջը լռեցնելու փորձեր՝ հաճոյախոսությունների կամ ակնհայտ վիրավորանքների միջոցով

«Սիրուն ջան», «գեղեցկուհի ջան» արտահայտություններ, որոնք հատկապես օգտագործվում են կին լրագրողների հասցեին՝ հարցերին խուսափողական պատասխաններ տալու ժամանակ[39]:

Կին լրագրողի՝ «Ձեր ոլորտում փոփոխություններ, կարծես թե, չենք տեսնում» հարցին՝ ոլորտի ղեկավարն ակնհայտ վիրավորանք է հնչեցնում. «Ես էլ քո մեջ, կներես, կին չեմ տեսնում»[40]:

## Սեռական ոտնձգություններ աշխատավայրում

«Աշխատանքի ընդունվելուց նախապայմաններից մեկն այն էր, որ պարտադիր է ամեն օր աշխատանքի ներկայանալ վառ շպարով ու կարճ կիսաշրջազգեստով... Խանութպանը նստում էր ու ժամերով նայում ոտքերիս... ամեն պահի, երբ աչքս ընկնում էր նրա կողմ, նա կամ իմ, կամ մյուս վաճառողուհու ոտքերին էր նայում. սուրճը դնում էր դիմացը, ծխախոտը վառում ու կարող էր ժամերով աչք չթարթել: Իսկ քանի որ ամառ էր, թեթև բլուզներ էի կրում, ապա նրա հայացքը վերևից ներքև էր իջնում, ներքևից էլ՝ վերև...» (հարցազրույց)[41]:

«Տնօրենը դասընկերոջս ծանոթն էր, ու կոնկրետ նա երբևէ ինձ ուղղակիորեն կապի մեջ մտնելու մասին առաջարկ չի արել, բայց այդքանով իմ անձեռնմխելիությունն ավարտվում էր: Մատուցողներ, հաճախորդներ, բարմեն, անգամ առաքիչներ՝ բոլորը, երբ տեղեկանում են, որ մատուցողուհի ես, կարծես իրենց պարտքն են համարում քեզ անբարո առաջարկ անել: Ընդ որում, եթե նախկինում մինչ բուն առաջարկին կամ գործողություններին անցնելը միասին կինո գնալու կամ սուրճ խմելու առաջարկ էին անում, ապա հիմա էլ երկար-բարակ չեն խոսում, միանգամից ասում են այն, ինչ քեզնից ուզում են: Մի խոսքով, ամեն ինչ տեսել եմ» (հարցազրույց)[42]:

«Ես ճանաչում եմ բազմաթիվ կանանց, որոնք հրաշալի դերասանուհիներ են, և մենք խոսել ենք բազմիցս այն մասին, թե ինչու պետք է գնանք ռեժիսորի առանձնասենյակ ու սիրախաղի բռնվենք նրա հետ»[43]:

#MeToo և Time's Up սեռական ոտնձգությունների և սեռական բռնության դեմ շարժումները հանրայնացրեցին բազմաթիվ պատմություններ՝ կինոոլորտում առկա սեռական ոտնձգությունների և բռնությունների մասին:

«Դրանք ամենաասթափեցնող շարժումներն էին, որ երբևէ գոյություն են ունեցել, քանզի ստիպեցին մարդկանց գիտակցել մեր ոլորտում առկա անհավասարությունը» (Ջուլիանա Մուր, հոլիվուդյան դերասանուհի)»[44]:

[39]https://bit.ly/39xhDz1
[40]http://womennet.am/sexism/
[41]http://womennet.am/job-requirements-for-young-women/
[42]Նույն տեղում
[43]https://www.businessinsider.com/women-share-experiences-of-hollywood-sexism-2017-7
[44]Julianne Moore admits the #MeToo movement ‘has opened doors … https://www.dailymail.co.uk/tvshowbiz/article-7631137/Julianne-Moore-admits-MeToo-movement-opened-doors-things-wont-change.html?fbclid=IwAR0CJsVB-DurCxUegWzxRFvCQ131fW3X_D39Oo8yJY0WqW4qpluNoOdmjfo

**Մասնագիտական աճի խոչընդոտներ, «ապակյա առաստաղ» և «կպչուն հատակ»**

«Եթե համեմատեմ, ամբողջ աշխատանքային փորձիս ընթացքում ոչ մի տեղ էլ տղամարդը առավելություն չի ունեցել: Միայն երբ պահը գալիս է, որ պետք է ընտրեն, թե ում պաշտոն տան, զուտ ընտրում էին տղամարդուն, քանի որ ինքն է ընտանիք պահողը, դեկրետի հարց չկար» (հարցվող, Էջմիածին):

«Կնոջ իրավունքներն ու հնարավորությունները սահմանափակվում են տղամարդու կողմից, այսինքն՝ կինը դարձյալ զրկված է «աճելու» հնարավորությունից: Շատ ամուսիններ պարզապես արգելում են իրենց կնոջն աշխատել: Նման իրավիճակում դժվար է կայանալ որպես արվեստագետ կամ գիտնական»[45]:

«Ինձ անհրաժեշտ եղավ երեք տարի թեզս պաշտպանելու համար, իսկ կնոջս 5 տարի պետք կլինի, քանի որ երեխաների և ընտանիքի հետ կապված պարտականությունները թույլ չեն տա ավելի շուտ…» (ԵՊՀ, պատմության ֆակուլտետ, դասախոս, տղամարդ)[46]:

«Գեղարվեստի ակադեմիայում սովորելու տարիներին մի երրորդ կուրսի աղջկա իր ընկերը ստիպում էր, որ նա դուրս գա ակադեմիայից, որովհետև միայն նոր-նոր էր երիտասարդը պարզել, որ իր ընկերուհին մերկ բնորդ է նկարում: Իսկ ակադեմիական նկարչության հիմքը հենց մերկ բնորդ նկարելն է» (Մարիամ Մուղդուսյան, նկարիչ)[47]:

[45] WomenNet.am https://bit.ly/3bBZUr1
[46] Գենդերային խնդիրները մանկավարժական (դասախոսների, ուսուցիչների և ապագա մանկավարժ ուսանողների) միջավայրում, 2014թ. https://www.osf.am/wp-content/uploads/2014/01/Policy_paper_Ruzanna_Tsaturyan.pdf
[47] https://www.vexplode.com/ru/tedx/art-as-a-monopoly-mariam-mughdusyan-tedxsevan/
[48] Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2019թ., ՀՀ ՎԿ, https://armstat.am/file/article/gender_2019.pdf

# Ինչ են փաստում հետազոտությունները

Հայաստանում կանանց մասնաբաժինը աշխատանքային ռեսուրսների կազմում 55% է, սակայն փնփեսապես ակփիվ է կանանց 55,8%-ը, իսկ փղամարդկանց: 75,2%-ը, թեև բարձրագույն կրթություն ունեցող անձանց մեծ մասը կանայք են: Կանանց և փղամարդկանց փնփեսական ակփիվության գենդերային բացը 25-34 փարիքային խմբում 41.6% է, ինչը հիմնականում պայմանավորված է կանանց ընփանեկան պարփականություններով (հղիություն, ծննդաբերություն, երեխայի և ընփանիքի այլ անդամների խնամք)[48]:

Հայաստանում կանանց միջին ամսական անվանական աշխապավարձը (վասփակը) 2017-2018 թթ. փվյալներով կազմել է փղամարդկանց վասփակի 64,7%-ը, կամ վարձափրության գենդերային բացը կազմել է 35,3%:

Կանայք հիմնականում զբաղված են առավել ցածր վարձափրվող ոլորփներում: Կանայք ավելի հաճախ են ներգրավված միջին և ցածր պաշփոններում նույնիսկ այն ոլորփներում, որոնցում ավելի մեծ ներգրավվածություն ունեն: Ղեկավար պաշփոն զբաղեցրած փղամարդիկ գերազանցում են կանանց 2.4 անգամ:

Հանրապեփությունում անցկացված հարցումները բացահայփում են, որ հասարակական կարծիքը արդարացնում է կանանց ու փղամարդկանց աշխապավարձերի փարբերությունը՝ գփնելով, որ կնոջ աշխափելու պարագայում փղամարդու աշխապավարձի չափը պեփք է անպայմանորեն ավելի բարձր լինի, քան կնոջը, քանի որ հակառակ դեպքում կինը կարող է օգփագործել այդ հանգամանքը՝ ընփանեկան հարաբերություններում «անհնազանդություն» ցուցաբերելով[49]*:*

Տնփեսապես ոչ ակփիվ է փղամարդկանց 31.2%-ը, կանանց՝ 52.8%-ը: Տնփեսապես ոչ ակփիվ կանանց մոփ 40%-ն ունի բարձրագույն կամ միջին մասնագիփական կրթություն: Տնփեսապես ոչ ակփիվ կանանց մեծ մասը փնային փնփեսուհիներ են, որոնք կափարում են փնային փնփեսություններում չվճարվող աշխափանքի մեծ մասը, ինչը չի սփանում արժեքային որևէ գնահափում և չի արփացոլվում ազգային հաշիվների համակարգում[50]: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008 թ. կափարված ժամանակի բյուջեի ուսումնասիրության փվյալներով՝ կանայք չվճարվող աշխափանքի (փնային փնփեսության և ընփանիքի խնամքի) վրա ծախսում են 5 անգամ ավելի շափ ժամանակ, քան փղամարդիկ:

[48]Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2019թ., ՀՀ ՎԿ, https://armstat.am/file/article/gender_2019.pdf
[49]ԳՀԱԿ, Հայաստանի գենդերային բարոմետր, Երևան, 2015թ. http://www.ysu.am/files/Gender%20Barometer.Armenia.English.pdf
[50]Աշխատանքի շուկան Հայաստանում, 2019թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, https://armstat.am/am/?nid=82&id=2226

## Դրսևորվում է.

### Ինստիտուցիոնալ մակարդակում.

- Կին քաղաքական գործիչների ցածր ներկայացվածություն քաղաքական հարթակներում և որոշումների ընդունման մակարդակում[51]:
- Կին քաղաքական գործիչների նկատմամբ դրսևորվող խտրական վերաբերմունք, որը կաշկանդում է նրանց քաղաքական դաշտում գործունեություն ծավալել՝ չթողնելով նրանց դուրս գալ ավանդաբար գծված տարածքից:










### Հանրային հարթակներում և մեդիայում.

- Քաղաքական գործընթացներում ներգրավված կին պատգամավորների, կին պետական պաշտոնյաների ու հասարակական գործիչների թիրախավորումը սոցիալական ցանցերում, այդ թվում՝ արժանապատվությունը վիրավորող արտահայտությունների, սեռի հատկանիշով ատելության խոսքի և սպառնալիքների միջոցով, որոնք լուրջ վնաս են հասցնում նրանց հեղինակությանը, միտված են հետ պահելու նրանց քաղաքական ակտիվ գործունեությունից, թուլացնելու որպես մրցակից, կանխելու կամ վարկաբեկելու նրանց նախաձեռնությունները:
- Կին քաղաքական գործիչներին տրվող ակնհայտ խտրական հարցեր, թե ինչպե՞ս են համատեղում ընտանիքն ու հանրային գործունեությունը (նման հարց տղամարդկանց դեպքում երբեք չի հնչում), կին քաղաքական գործիչների ընդգծված պատկերումը՝ մոր կամ տնային աշխատանք կատարելիս:




[51]Հայաստան. կանայք պետության կառավարման ղեկին, http://womennet.am/kananc-qachaqakan-nerkayacvatsutuyn/.
ՏԻՄ- 2020. Կանանց մասնակցության շարժընթացը / ինֆոգրաֆիկա, http://womennet.am/tim-2020-kananc-masnakcutyun/

**Կին քաղաքական գործիչներին լռեցնելու փորձերը՝ սեռական պատկանելության շեշտադրման միջոցով**

«Իմ դաստիարակությունը թույլ չի տալիս հաշվի չառնել, որ դուք կին եք, հետևաբար՝ փորձեք կնոջը վայել նազանքով, քնքշությամբ այս ամբիոնն օգտագործել» (տղամարդ պատգամավորը՝ ընդդիմադիր կին պատգամավորին):

«Ի՛նչ եք գամել ձեզ ասֆալտին, դա հայ կնոջը հարիր չէ» (պատգամավորի դիտարկումը՝ բողոքի ցույցի մասնակից կանանց):

«Խնդրում եմ՝ չդրսևորել հայ կնոջն ու պատգամավորին անվայել պահվածք» (տղամարդ պատգամավորը՝ ընդդիմադիր կին պատգամավորին):

**Կին քաղաքական գործիչների ներկայացումը ամուսնաընտանեկան կարգավիճակի կամ արտաքին տեսքի անհարկի շեշտադրումներով**

«Ինչպե՞ս եք համատեղում ընտանիքն ու հանրային գործունեությունը» կամ «Քաղաքականությամբ զբաղվելը չի՞ խանգարում ձեզ երեխաների և ընտանիքի խնամքը կազմակերպելու հարցում» (լրագրողների հարցադրումներից՝ կին քաղաքական գործիչներին):

«Անհարմա՛ր է, վերջը կին եք, մայր եք» (կնոջ նկատողությունը՝ ընդդիմադիր կին ավագանու անդամին):

«Ամուսնացի՛ր՝ կանցնի» (տղամարդ պատգամավորի հրապարակային խորհուրդը կին պատգամավորին):

**Կնոջ ստորադաս կարգավիճակի շեշտադրումը՝ տղամարդ-կին կամ հակառակը՝ տղամարդկության կոնցեպտների միջոցով**

«Մարդ, որը, կին լինելով, ավելի շատ տղամարդ է, քան պաշտոնյա տղամարդիկ, որ իրենց տղամարդ են կոչում» (կին թեկնածուին ուղղված գովեստի խոսքեր՝ թիմակից տղամարդու կողմից):

«Տղամա՛րդ ես, հրավիրում եմ բանավեճի, արի առանց Ն...ի, արի տեսնենք, ո՞նց ես լուծելու խնդիրները» (կին թեկնածուի հրավերը, որն ուղղված է տղամարդ մրցակցին):

**Արժանապատվությանն ուղղված վիրավորանք**

«Դուք ի՞նչ կին, կինը դեպի իրեն ձգող հատկություն է ունենում, դուք դա չունեք…» (կին ավագանու անդամի դեմ ուղղված ելույթից):

«Միգուցե այլ նպատակով պետք են այդ կանայք, բայց ոչ քաղաքական առումով» (հրապարակային խոսք՝ ուղղված կին պատգամավոր գործընկերոջը):

«Այդ առաքինի տիկնոջը պետք է սովորեցնել, որ ԱԺ-ն մայրուղի չէ, որ մեքենա կանգնեցնել, ու մեքենաները չկանգնեն, դրանից նեղանան» (պատգամավորի ելույթը կին գործընկերոջ մասին):

«Ո՞վ ա քո տերը, դու երեխեք, մարդ չունե՞ս» (հրապարակային խոսք պատգամավորի կին թեկնածուի հասցեին):

**Կանանց՝ որպես քաղաքական գործիչների ոչ լիարժեք լինելու մասին պնդումներ**

«Կնիկ է, նրա հետ ի՞նչ հակասություն պիտի ունենամ» (պատգամավորը՝ կին գործընկերոջ մասին):

«Ես ինձ վիրավորված կզգամ, որ հաղթեմ կնոջը» (տղամարդ թեկնածուն՝ կին մրցակցի մասին):

«Կին պատգամավոր է, ասել ասել է, լավ է՝ հարևան երկրների մասին բան չի ասել»… (տղամարդ պատգամավորը՝ կին գործընկերոջ մասին):

**Կարծրատիպային պնդումներ**

«Քաղաքականությունը կնոջ գործը չէ»:

«Հայ տղամարդն ու հայ կինը չպետք է հավասար լինեն, դա նորմալ չի» (պատգամավորի հանրային խոսքից):

**Սեռի հատկանիշով ատելության խոսք՝ ուղղված կին քաղաքական գործիչներին**

Պետական պաշտոն զբաղեցնող անձը կին փորձագետի վերաբերյալ գրառում էր կատարել Ֆեյսբուք սոցիալական ցանցում՝ նրա գործունեության հետ կապված սուր քննադատությունը համեմելով կնոջ քաշի վերաբերյալ որակումներով և վիրավորական ձևակերպումներով[52]:

Լրատվական գործունեությամբ զբաղվող անձը վիրավորական և անպարկեշտ գրառում էր հրապարակել Ֆեյսբուքում՝ կին պաշտոնյայի և նրա նորածին երեխայի վերաբերյալ[53]:

[52] https://www.facebook.com/styopa.safaryan.9/posts/1307094796162683
[53] https://www.facebook.com/akhachaturian1/posts/10222000681548816

## Կանայք պետության կառավարման ղեկին[54]

- ՀՀ կառավարության կազմում՝ 12 նախարարներից մեկն է կին (8,3%), 45 փոխնախարարներից միայն 12-ն են կին (27%):
- Հայաստանի բոլոր փասը մարզերի ղեկավարները տղամարդիկ են, փոխմարզպետների թվում միայն երկուսն են կին:
- Հայաստանի 502 համայնքներից 9-ն են կանայք ղեկավարում (1.8%), ավագանու 3784 անդամից 371-ը կանայք են (9.8%):
- Հայաստանում միայն մեկ կին քաղաքապետ կա (Վաղարշապատ):
- Հայաստանի 502 համայնքներից 282 համայնքների ավագանիների կազմում կին չկա:
- Հայաստանի 52 խոշորացված համայնքներից միայն մեկն է կին ղեկավարում:
- Խոշորացված համայնքների բնակավայրերի 420 վարչական ղեկավարներից 22-ը կանայք են (5.2%):

### Ի դեպ

ՏԻՄ-երում կանանց մասնակցության հանրային ընկալումների մասին հետազոտության[55] տվյալներով՝

- հարցվածների 74%-ը գտնում է, որ կանանց մասնակցությունը ՏԻՄ-երում պետք է մեծանա, և կանայք ՏԻՄ-երում պետք է կազմեն 30-50%.
- հարցված տղամարդկանց մոտ 60%-ը պատրաստ չի տեսնել իր ընտանիքի որևէ կին անդամի ՏԻՄ-երի որևէ պաշտոնում:

## Սեքսիզմը, սեռական ոտնձգությունն ու բռնությունը՝ կին խորհրդարանականների նկատմամբ

- Միջխորհրդարանական միության[56] կողմից 2018 թվականին հրապարակված «Սեքսիզմը, սեռական ոտնձգությունն ու բռնությունը՝ կին խորհրդարանականների նկատմամբ» զեկույցի[57] համաձայն՝ եվրոպական 45 երկրում անցկացված անանուն հարցման արդյունքում, 123 կանայք, որոնցից 81-ը պատգամավոր էին, 42-ը՝ աշխատակազմերի աշխատակից, վկայել են, որ խորհրդարանական աշխատանքների հետ կապված հոգեբանական, սեռական, ֆիզիկական կամ տնտեսական բռնությունների փորձեր են եղել իրենց նկատմամբ:

- Ուսումնասիրությանը մասնակցած կին պատգամավորների ավելի քան 85%-ն աշխատանքային գործունեության ընթացքում հոգեբանական բռնության է ենթարկվել, 68%-ը լսել ու նկատել է իրենց արտաքին տեսքին վերաբերող կամ գենդերային կարծրատիպերի շրջանակում արված դիտողություններ, 46.9%-ը ակնհայտ սպառնալիքներ է ստացել, 58,2%-ը սոցիալական ցանցերում դարձել է առցանց սեքսիստական գրոհների թիրախ, իսկ կանանց գրեթե մեկ քառորդը սեռական ոտնձգության զոհ է եղել:

[54] Տվյալները՝ ՀՀ կառավարության պաշտոնական կայք և ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, 2020 թ. հունիսի 15-ի դրությամբ

[55] Տեղական ինքնակառավարման բարեփոխումների համատեքստում՝ կանանց առաջխաղացման և որոշումների կայացմանը մասնակցության հանրային ընկալումն ու քաղաքականության բացերը» հետազոտությունն անցկացվել է «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակում, 2019 թ.

[56] https://www.ipu.org/

[57] Sexism, harassment and violence against women in parliaments in Europe https://www.ipu.org/resources/publications/issue-briefs/2018-10/sexism-harassment-and-violence-against-women-in-parliaments-in-europe

### Դրսևորվում է.

### Ինստիտուցիոնալ մակարդակում.

- Կանանց կարծիքի անտեսում, կանանց ու տղամարդկանց ոչ հավասարակշռված՝ 6:1 հարաբերակցություն արտոնյալ խոսնակների, նյուսմեյքերների թվում և 8:1-ի հարաբերակցություն փորձագետների թվում:
- Կանանց նվազ ներկայացումը տեղեկատվական հոսքերում և մեդիա արտադրանքում:
- Կանանց ցածր ներկայացվածությունը ԶԼՄ-ների քաղաքականության համար պատասխանատու պաշտոններում[58]:

### Մեդիաարտադրանքում






- Մատուցվող բովանդակության միջոցով կարծրատիպերի, կանանց ու տղամարդկանց կարծրատիպային դերերի վերարտադրում և ամրապնդում, կանանց նկատմամբ բռնության արդարացման հստակ միտում, բռնության քողարկված քարոզ կամ բռնության նորմալացում[59]:
- Սերիալների միջոցով ընտանեկան անառողջ հարաբերութունների, խեղաթյուրված արժեքների և վարքային մոդելների տիրաժավորում[60]:
- Սերիալներում կանանց ու տղամարդկանց խեղված կերպարների ներկայացում. կանանց դեպքում՝ չաշխատող, ճնշված, լացող տնային տնտեսուհիներ, ամուսինների և զուգընկերոջ կողմից դավաճանված կամ միայն ամուսնության հարցով մտահոգված և խարդախություններով զբաղվող կերպարներ. տղամարդկանց դեպքում՝ կանանց իշխող, սիրուհիներ ունեցող և «հարց լուծող» բռնարարների կերպարներ[61]:
- Կանանց ներուժի թերագնահատում, նրանց հանրային ակտիվության թերարժևորում, զոհի կերպարում կնոջ ներկայացում[62]:
- «Կրկնազոհացում» (double victimization)՝ զոհի մեղադրում բռնություն «հրահրելու» մեջ:
- Հումորային հաղորդումներում կարծրատիպերի վերարտադրում՝ կանանց ու տղամարդկանց թերությունների շահարկման միջոցով:

---

58 «Խտրականությունն ու բռնությունը հեռուստաեթերում և առցանց մեդիայում. որքանով է գենդերային զգայուն հայաստանյան մեդիան», մշտադիտարկման արդյունքներ, 2019 (Հետազոտությունն իրականացվել է «Կինը քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակում):
59 Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, https://bit.ly/3cFvCVJ
60 Առնականությունն ու գենդերային բռնությունը հայկական հեռուստասերիալներում, Երևան, 2014թ., http://www.ysu.am/files/Reserch%20paper%2003.09.2014..pdf
61 Հայ կնոջ կերպարը ԶԼՄ-ում (հեռուստատեսությունում). գենդերային զգայունությունից գենդերային կարծրատիպեր, Երևան, 2015թ., http://www.ysu.am/files/Lilit%20Shakaryan%20_%20ARM.ENG%20Report.pdf
62 «Կնոջ կերպարը լրատվամիջոցների ներկայացմամբ», Պրո-Մեդիա ՀԿ, 2011թ., https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Womans-Image-in-Media_Full-Report_Arm_web.pdf

**Կին-տղամարդ կարծրատիպային դերային բաշխում**

«Կնոջ երջանկության բանաձևը՝ լավ ընտանիք, լավ ամուսին, երեխաներ՝ առողջ ու հաջողակ»:

«Կանացի գործեր են՝ արդուկելը, լվացքը և ուտելիք պատրաստելը» («Վիտամին» ակումբ):

«Տղամարդը պետք է ձեռքը խփի սեղանին, իսկ կինը՝ խոնարհի ու հեզ կատարի նրա ասածը»:

«Կանայք չեն կարող հավասարվել տղամարդկանց, կանանց գերակա խնդիրն է երեխա ունենալը»:

«Պիտի լրիվ հայկական տիպի տղամարդ ճարենք, որ չթողնի, որ կինը աշխատի, թե չէ եվրոպականը մեզ պետք չի»[63]:

**Կանանց նյութապաշտության, թերարժեքության մասին արծրատիպերի ամրապնդում կանանց նվաստացում որպես առնականության բաղկացուցիչ մաս**

«Կինը չի կարող կարատեի մասին գիրք գրել, ավելի լավ է սալաթ սարքի»:

«Կինը ղեկին նման է նռնակով կապիկի»:

«Կանանց երջանկությունը կախված է իր գնումների քանակից» («Վիտամին» ակումբ):

Ամեն մեկի հետ քնելուց հո տուն չե՞մ բերի[64]:

**Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության նորմալացում**

Հայկական սերիալներից մեկում ներկայացված 730 րոպեներից 328-ը պարունակում են կանանց նկատմամբ բռնության տարաբնույթ տեսարաններ[65]:

«...Հա, բալա ջան, բայց, դե, դա նորմալ ա: Էդ ո՞ր մի սիրող ամուսինը իրա կնոջ վրա ձեռք չի բարձրացնում: Ու ավելին ասեմ՝ ո՞ր մի սիրող կինը կգնա ու կբողոքի իր ամուսնու դեմ»[66]:

«Տղամարդու համար կնոջ, աղջկա, քրոջ խայտառակությունը կրկնակի խայտառակություն ա: Վահագը իրա ամուսինն ա ու իրավունք ունի պատժելու»:

«Եթե լեզուդ ատամներիդ տակ չպահես, գիտե՞ս չէ՝ ինչ կլինի»[67]:

[63] Հայ կնոջ կերպարը ԶԼՄ-ում (հեռուստատեսությունում). գենդերային զգայունությունից գենդերային կարծրատիպեր, http://www.ysu.am/files/Lilit%20Shakaryan%20_%20ARM.ENG%20Report.pdf

[64] «Խտրականությունն ու բռնությունը հեռուստաեթերում և առցանց մեդիայում. որքանով է գենդերային զգայուն հայաստանյան մեդիան» մշտադիտարկման արդյունքների ամփոփում, 2019:

[65] «Երևանում բողոքում են սերիալներում բռնության դեմ. «Դժվար ապրուստի» 730 րոպեներից 328-ը բռնություն, լաց և դեպրեսիա են» http://www.panarmenian.net/arm/news/117531 (ապրիլ 20, 2014):

[66] Ատելության խոսք, ընտանեկան բռնություն. հայկական սերիալների ուղերձները, https://bit.ly/3bGc3vk

[67] Առնականությունն ու գենդերային բռնությունը հայկական սերիալներում, http://www.ysu.am/files/Reserch%20paper%2003.09.2014..pdf

**Դրսևորվում է.**

**Կառուցվածքային և անհատական մակարդակում.**




- Կանանց նվաստացնող և թիրախավորող գրառումներ և մեկնաբանություններ:
- Կանանց հասցեին ակնհայտ հայհոյանքներ, կանանց ուղղված վիրավորական կոչեր և հորդորներ:
- Սեքսիստական բովանդակությամբ ծաղրանկարների տարածում:
- Ատելության խոսք կին իրավապաշտպանների, քաղաքական ու հասարակական գործիչների նկատմամբ:
- Սպառնալիքներ կին իրավապաշտպանների, քաղաքական գործիչների և նրանց ընտանիքի անդամների հասցեին:
- «Կրկնակի վիկտիմիզացիա» (կրկնազոհացում)՝ զոհի մեղադրում բռնություն «հրահրելու» մեջ:

**Կրկնակի զոհացում, կանանց վիրավորող և անարգող մեկնաբանություններ, ատելության խոսք**

«43 տարեկան ղախպեն 28 տարեկան տղին վրաքաշ է արել՝ զբաղեցրել է, չի թողել, որ ընտանիք կազմի: Է, հետո ... պիտի հարգե՞ր նրան այդ 28 տարեկան գյադեն»:

«Բայց այդ լիրբը (հողը թող խաբար չտանի) աղջիկ երեխու ներկայությամբ սիրեկան է ընդունել: Երես է տվել... Անուղեղ հավը» (ատելության խոսք Ֆեյսբուք սոցիալական ցանցում՝ ուղղված Գյումրիում ընտանեկան բռնության հետևանքով սպանված կնոջը)[68]:

«Կներե՛ք, էլի, որ ասեմ, որ այդ կինն անպատասխանատու, խոզ տականք ա, շատ կոպի՞տ կինչի: Ինձ թվում ա՝ ոչ այնքան: Տեսնես՝ ո՞նց ա իրեն զգում: Ես, օրինակ՝ ամոթից ու նեղվածությունից գետինը կմտնեի: Ասենք՝ կաղերսեի գետնին բացվել ու կուլ տալ ինձ» (ատելության խոսք Ֆեյսբուք սոցիալական ցանցում՝ COVID-19-ով վարակված կնոջ վերաբերյալ)[69]:

**Կին իրավապաշտպաններին և նրանց երեխաներին ուղղված սպառնալիքներ**

«Տնից դուրս գալուց կողքերդ նայի, զգույշ էղի, էս երկու օրը չսպանեն հանկարծ երեխուդ հետ» (սպառնալիքներ իրավապաշտպանի հասցեին)[70]:

«Սրա նմաններին պետք է վառել մեր անհանդուրժողականության ու ժխտողականության կրակի վրա» (սպառնալիքներ իրավապաշտպանի հասցեին)[71]:

«Ձենդ կտրի՛, կախա՛րդ, պետք ա տղուդ մորթեն, որ իմանաս» (սպառնալիքներ իրավապաշտպանի հասցեին)[72]:

[68]https://hraparak.am/post/6b1b76013ff954b1402dc4009b289fdc
[69]https://armdaily.am/?p=84166&l=am
[70]https://www.azatutyun.am/a/27491680.html
[71]Մարդու իրավունքներ տուն-Երևան, միջանկյալ զեկույց 2019թ., https://issuu.com/humanrightshouseyerevan/docs/hrhmidreport2019hy
[72]Նույն տեղում:

## Դրսևորվում է.

## Կառուցվածքային մակարդակում.

- Կարծրատիպերի վերարտադրում և ամրապնդում:
- Կանանց գեղեցկության և սեքսուալ գրավչության շահագործում:
- Կանանց առարկայացում[73], գովազդվող ապրանքների հետ նույնականացում:
- Կնոջ մարմնի օգտագործում գնորդին գրավելու համար, կանանց՝ որպես սեքս օբյեկտի[74] ներկայացում, կանանց մարմնի ֆրագմենտավորում[75]:








- Գեղեցկության ստանդարտների և չափանիշների պարտադրում, կանանց արտաքին տեսքի շահագործում:
- Տնային տնտեսուհու, առևտրամոլ (շոպոգոլիկ) կնոջ, իդեալ կնոջ կերպարների շահարկում:
- Իսկական կնոջ և իսկական տղամարդու կերպարների պարտադրում:
- Կանանց կախյալ և ստորադաս կարգավիճակի շեշտադրում:
- Տղամարդկանց հաճոյանալու կանանց մոտիվացիայի շահարկում:
- Տարիքային խտրականության (էյջիզմ) և խտրականության այլ ձևերի հետ հատվող գովազդային լուծումների օգտագործում







[73]Առարկայացումը լայն իմաստով նշանակում է անձին որպես ապրանք կամ առարկա վերաբերվելը՝ առանց անձի անհատականությունը կամ արժանապատվությունը հաշվի առնելու:
[74]Կնոջ սեռական օբյեկտիվացում, երբ կինը դիտարկվում է հիմնականում որպես տղամարդու սեռական ցանկության օբյեկտ, այլ ոչ թե որպես լիարժեք անհատ:
[75]Ֆրագմենտավորում – տպագիր գովազդում օգտագործվող հնարք, երբ մարմնի որոշ սեքսուալացված հատվածներ առանձնացվում են դիտողի ուշադրությունը գրավելու համար: Դրանով իսկ ոչնչացվում է մարդու անհատականությունը, պատկերված մարդը չի ընկալվում որպես ամբողջություն, դիտողը տեսնում և ընկալում է սեքսուալ ասոցիացիաներ առաջացնող մարմնի մասեր:

**Կնոջ արտաքինին վերաբերող կարծրատիպերի ամրապնդում, կինը՝ գեղեցկության օբյեկտ**

«Սիրելի՛ս, նիհարի՛ր, և ես կվերադառնամ» (կանանց մոտիվացնող գովազդ մարզասրահի ծառայություններից օգտվելու նպատակով):

Գովազդային հոլովակների մեծամասնությունը ցուցադրում են երիտասարդ, նիհար, սեքսուալ, գեղեցիկ, երջանիկ, միշտ ժպտացող կանանց կերպարներ, որոնք բացարձակապես ոչնչով չեն զբաղվում և իրենցից ներկայացնում են միայն գեղեցկության իդեալ:

**Կանանց պատկերումը որպես «սեքս օբյեկտների»**

Կանանց պատկերումը թափանցիկ ու բաց հագուստներով, մերկ կամ ներքնազգեստով, պառկած և հրավիրող դիրքով, դեմքի հատուկ արտահայտությամբ (կիսաբաց շուրթեր, գայթակղիչ հայացք)[76]:

Կոնյակի գովազդում՝ կանանց մարմնի ֆրագմենտավորումը արվում է խմիչքից հաճույք ստանալու հետ համեմատությունը շահարկելու նպատակով:

**Կնոջ մարմնի առարկայացում**

Գովազդներում ապրանքը, իրերը, կենդանիները, նույնիսկ վեբ կայքը համեմատվում են կնոջ հետ…

Կաթնամթերքի գովազդում պատկերված կովը ներկայացվում է կնոջ տարազով:

«Վատ կնիկն ու վատ գազի կաթսան մի ընդհանուր բան ունեն՝ երկուսն էլ շատ են ծախսում. քիչ ծախսող կնիկ չկա, իսկ քիչ ծախսող կաթսա արդեն կա» կամ՝

«Շուկայում առկա ջեռուցման կաթսաները բազմաթիվ են. դրանց մեջ կան չափսերով մեծ կաթսաներ, էկոլոգիապես ոչ մաքուր կաթսաներ, աղմկոտ կաթսաներ, անարդյունավետ կաթսաներ… Բայց կա մեկը, որը կարելի է տուն տանել…» (կաթսաների տեսականու գովազդը կանանց կերպարներով):

Գովազդային հոլովակում զուգարանակոնքը նույնականացվում է ապագա հարսի կերպարի հետ: Որդու և հոր հեռախոսային երկխոսությունը կառուցվում է երկարատև և հարմարավետ օգտագործման համար «Ռոսա» զուգարանակոնքի շուրջ: «Պա՛պ, վերջապես ես արեցի իմ ընտրությունը, անունը Ռոսա է, հենց հիմա բերում եմ տուն»,- ասում է որդին, իսկ հայրը՝ ենթադրելով, որ խոսքը ապագա հարսի մասին է, խորհուրդ է տալիս, թե՝ մի՛ շտապիր, ամեն ինչ ճշտիր՝ «ինչացու ա»: Հաջորդ դրվագում որդին արդեն ուրախ նշում է, որ ոչ պահանջկոտ է, տեղադրելն էր շատ հեշտ, ինչը ավանդապաշտ հայ հոր զայրույթն է առաջացնում. «Ա՛յ տղա, ես քեզ չեմ ասել, որ մինչև չամուսնանաս՝ ոչ մի տեղադրել»…

[76] Կանանց պատկերումը որպես «սեքս օբյեկտների» սեքսուալացնում է աղջիկներին դեռևս շատ փոքր հասակից. նրանք փորձում են նմանվել ամսագրի մոդելներին, լինել գայթակղիչ ու ցանկալի: Երիտասարդ տղաները, իրենց հերթին, աղջիկների մասին իրենց պատկերացումները կազմում են՝ մտքում ունենալով սեքսուալ մոդելների կերպարները: Գովազդների ստեղծած այս դիսկուրսն ազդում է ոչ միայն դեռահասների, այլև հասուն մարդկանց վրա՝ ձևավորելով և ամրապնդելով կնոջ ընկալումը որպես «սեքս օբյեկտի»:

# Ինչ են փաստում հետազոտությունները

«Կնոջ կերպարը հայաստանյան գովազդում»[77]

Հայկական ամսագրային գովազդներում պատկերված կին կերպարների 78%-ը պատկանում է «երիտասարդ» տարիքային խմբին (30 տարեկանից ցածր): Հեռուստատեսային գովազդներում «միջին տարիքի» (30-50 տարեկան) կանայք ընդամենը 20% են, դա ավելի մեծ տոկոս է, քան ամսագրերում տեղադրված գովազդներում:

Հայաստանյան ամսագրերում տեղադրված գովազդներում կին մոդելների 58%-ը նիհարակազմ է, 10%-ը կարող է ընկալվել որպես մարմնի միջին կազմվածք ունեցող, իսկ կանանց 3%-ը ներկայանում է որպես չափազանց նիհար, մինչդեռ չկան ,,գեր" կատեգորիային պատկանող կանայք:

Ամսագրային գովազդների միայն 6%-ում են կանայք ներկայացվում աշխատանքային միջավայրում: Հեռուստատեսային գովազդներում կին գլխավոր հերոսների 15%-ը պատկերված է տանը, և միայն 12%-ն է գտնվում գրասենյակում:

Հետազոտված ամսագրային գովազդների 42%-ում կանայք պատկերվում են որպես «գեղեցկության օբյեկտներ», 22% դեպքերում՝ որպես «սեքս օբյեկտ», 6% դեպքերում նրանք կատարում են սպառողի դերը, 1% դեպքերում հանդես են գալիս որպես ,,փնփեսուհիներ", 1% դեպքերում նրանց դերն «անհայտ» է և 28% դեպքերում նրանք կրում են ,,այլ" դեր, քան նշված «ավանդական» դերերը:

Հետազոտված գովազդներում կանանց 34%-ը սովորական հագուստով է հանդես գալիս, 33%-ը՝ կարճ և բաց հագուստով, 14%-ը՝ ներքնազգեստով:

Հեռուստատեսային գովազդների 81%-ում խոսնակի ձայնը տղամարդու է, մինչդեռ կին գլխավոր հերոսների 81%-ը առհասարակ չի խոսում:

Դիտարկված 273 հեռուստագովազդներից միայն 8-ի կամ 3%-ի դեպքում է կնոջ խոսքը գովազդում փաստարկված և կոնկրետ:

***

Սեքսիզմ պարունակող գովազդները ոչ միայն ստեղծում ու պարտադրում են գեղեցկության իդեալներ ու չափանիշներ, այլև, մշտապես շեշտելով կնոջ մարմնական գեղեցկությունը և անտեսելով այլ հատկանիշներ, ստիպում են կարծել, թե կնոջ կյանքի հիմնական նպատակն է լինել գեղեցիկ, գրավել տղամարդկանց, «պայքարել» նրանց ուշադրության համար և այդ ամենը անելու համար շարունակ նիհարել, սպառել անթիվ-անհամար գեղեցկության և մարմնի խնամքի միջոցներ, դիմել ծայրահեղ միջոցների, ինչպես, օրինակ՝ պլաստիկ վիրահատությունների: Գովազդային ինդուստրիայի կողմից պարտադրվող գեղեցկության ստանդարտները հաճախ հանգեցնում են երիտասարդ աղջիկների և կանանց մոտ առողջական խնդիրների, այդ թվում՝ հոգեբանական շեղումների և սնվելու խանգարումների, կոսմետիկ վիրահատությունների, ինչպես նաև կյանքի մոդիֆիկացիայի փոփոխության պատկերվող «կատարելությանը» ամեն գնով հասնելու համար:

[77]«Կնոջ կերպարը հայաստանյան գովազդում» հետազոտություն, 2013թ. http://www.osf.am/wp-content/uploads/2013/12/Advertising_research.pdf

## Դրսևորվում է.

### Ինստիտուցիոնալ մակարդակում.

- Կանանց ու տղամարդկանց ոչ հավասարակշռված ներկայացվածություն կրթության ոլորտում:
- Կանանց նվազ մասնակցություն կրթության քաղաքականությանը վերաբերող որոշումների ընդունման մակարդակում:
- Կանանց նվազ ներկայացվածություն բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների ղեկավար դիրքերում:
- Կանանց մասնագիտական և գիտական կարիերայի աճի սահմանափակ հնարավորություններ:
- Մասնագիտական խտրազատման (սեգրեգացիա) պահպանում կրթության ոլորտում:

### Կրթության բովանդակության և դաստիարակության մեջ

- Գենդերային կարծրատիպերի վերարտադրում դասագրքերում, դաստիարակության նորմերում և պրակտիկայում:
- Կանացի և տղամարդկային մասնագիտությունների տարանջատման մասին պատկերացումների ամրապնդում, մասնագիտական ուղղորդման հարցերում կարծրատիպերի պարտադրում:




| Առարկա | Իգական | Արական |
|---|---|---|
| **Հասարակագիտություն** | **17.5%** | **82.4%** |
| Հասարակագիտություն (10րդ դասարան) | 18.4% (120) | 81.6% (531) |
| Հասարակագիտություն (11րդ դասարան) | 16.4% (53) | 83.6% (269) |
| Հասարակագիտություն (12րդ դասարան) | 17.9% (103) | 82.1% (472) |
| **Հայոց պատմություն** | **4.2%** | **95.8%** |
| Հայոց պատմություն (10րդ դասարան) | 5.8% (28) | 94.2% (450) |
| Հայոց պատմություն (11րդ դասարան) | 2.5% (20) | 97.5% (769) |
| Հայոց պատմություն (12րդ դասարան) | 4.5% (29) | 95.5% (625) |
| **Հայ գրականություն** | **19.5%** | **80.5%** |
| Հայ գրականություն (10րդ դասարան) | 18.9% (316) | 81.1% (1358) |
| Հայ գրականություն (11րդ դասարան) | 19.9% (342) | 80.1% (1376) |
| Հայ գրականություն (12րդ դասարան) | 19.8% (744) | 80.2% (596) |



**Կանանց ու տղամարդկանց դերերի կարծրատիպային վերարտադրումը դասագրքերում և դաստիարակության նորմերում**

Դասագրքերում արական դերերը հիմնականում ներկայացված են հանրային դաշտում, իսկ իգական դերերը՝ մասնավոր, ընտանեկան հարթությունում: Տղամարդիկ և տղաները հիմնականում ներկայացված են առաջնորդող, նախաձեռնող դերերում, մինչդեռ աղջիկները՝ ավելի շատ կատարողի, հետևողի, լրացնողի դերերում: Տղաները ներգրավված են ակտիվ, ստեղծագործ զբաղմունքներում՝ ծառ մագլցել, լողալ, մարզական խաղեր, վերանորոգում, հեծանիվ քշել, ֆիզիկական աշխատանք կատարել, մինչդեռ աղջիկները ներգրավված են հիմնականում ավելի պասիվ դերերում՝ հաճախ ընդամենը կրկնօրինակելով կնոջ կամ մոր դերերը[78]:

Դասագրքերում ներկայացված բոլոր հերոսները՝ պատմական, առասպելական, հեքիաթների, պատմությունների, բացառապես արական սեռի են: Հանրապետության ներկայացումը հեղինակները իրականացնում են բացառապես տղամարդ հերոսների տեսքով՝ անտեսելով գոնե ժամանակակից կին հերոսներին՝ սպորտի չեմպիոններ և այլն: («Ես և շրջակա աշխարհը» - 4)[79]:

Աղջիկները համեստ պետք է լինեն, հայ կնոջը հարիր, անկանոն շարժումներ չանեն տղաների մոտ, տղաներին էլ ասում եմ՝ մի՛ լացեք, տղամարդ եք (դասվար, Շիրակի մարզ)[80]:

**Ընտանեկան դերերի կարծրատիպերը դասագրքերում**

«Երջանիկ ընտանիքի» պատկերներում ընտանիքի անդամները բացառապես հանդես են գալիս առանձին դերերում՝ ցուցելով կանացի և տղամարդկային զբաղմունքների հստակ շրջանակը. շյուղերով գործող տատիկ, հեռուստացույց դիտող պապիկ, մայրիկը աղջկան դաս է սովորեցնում, հայրիկը բազմոցին թիկնած թերթ է կարդում կամ աղջիկը տիկնիկով է խաղում, տղան՝ գնդակով, սրով և այլն: Գրեթե բացակայում են միևնույն գործողության մեջ ներգրավված ծնողների մասին նյութերը կամ նկարները, բացակայում է նաև աշխատող, մասնագետ կնոջ կերպարը, և դրանով իսկ ամրապնդվում է «կնոջ տեղը խոհանոցում է» կարծրատիպը[81]:

Հանձնարարություն երեխաներին. «Ծանոթացե՛ք իրավիճակներին և մտածեք, թե դրանք ի՞նչ հետևանքներ կարող են ունենալ, ովքե՞ր կտուժեն դրանից և ինչպե՞ս: Հայրիկներն ու մայրիկները ամեն առավոտ աշխատանքի գնալու փոխարեն որոշում էին, թե այդ օրը ինչ հաճելի բանով զբաղվեն: Հայրիկները գնում էին ձուկ բռնելու, որսալու կամ պարզապես նարդի էին խաղում, իսկ մայրիկները որոշեցին, որ լվացքը, արդուկը, ճաշ եփելը տաղտկալի գործեր են, ավելի լավ է՝ վարսավիրանոց գնան՝ գեղեցկանալու» («Ես և շրջակա աշխարհը - 4», 2009):

[78]«Գենդերային դերերը Հայաստանի Հանրապետության տարրական դպրոցի դասագրքերում» հետազոտություն, https://www.osf.am/wp-content/uploads/2014/01/Gender_roles_in_primary_school_textbooks-2012.pdf
[79]Նույն տեղում, էջ 23:
[80]Նույն տեղում:
[81]Նույն տեղում:

## Մասնագիտական ուղղորդման կարծրատիպերը կրթության և դաստիարակության ոլորտում

Տարրական դպրոցի դասագրքերում ներկայացված «իգական» մասնագիտություններից են՝ ուսուցչուհի, պարուհի, վաճառող, հացթուխ, դերձակուհի, տնային տնտեսուհի, հազվադեպ՝ բժշկուհի: Մինչդեռ «լուրջ, կարևոր տղամարդկային» մասնագիտությունների և զբաղմունքների ցանկն ավելի ընդգրկուն է՝ նկարիչ, օդաչու, տանկիստ, զինվոր, վարորդ, շինարար, հյուսն, ատաղձագործ, մարզիկ, ոստիկան, քանդակագործ, դարբին, ջութակահար, տիեզերագնաց, աստղագետ և այլն[82]:

«Տեխնոլոգիա-1» աշխատանքային տետրում պատկերված նկարում ներկայացված են վեց մասնագետներ, որոնցից միայն մեկն է կին. պատշար, կենսաբան/բուսաբան, ինժեներ, զոդող, հյուսն տղամարդիկ և կար անող կին[83]:

Հումանիտար, սոցիալական, մշակույթի և արվեստի, առողջապահության ոլորտներում արձանագրվում է իգական սեռի ուսանողների գերակշռություն, երբ արական սեռի ուսանողներն էլ գերակշռում են ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, տեխնիկական ուղղվածության մասնագիտություններում[84]:

«Հայրս ասում էր, որ դիպուկահարը տղամարդու մասնագիտություն է: Դրա փոխարեն առաջարկում էր ուսուցչուհու, բժշկուհու կամ այլ «կանացի» մասնագիտություն ընտրել: Ի՞նչ պետք է մտածեին շրջապատում»[85]:

«Ես կուզեի, որ մասնագիտությունները տարանջատված չլինեն, չլինեն զուտ տղամարդկային մասնագիտություններ: Ես ուզում եմ զինվորական դառնալ, ծառայել բանակում, ինչպես Իսրայելում են ծառայում, բայց Հայաստանում դա ընդունված չի, և տանն էլ չեն թողնի: Իսկ եթե դա ընդունված լինի պետական մակարդակով, ոչ ոք չի առարկի: Խոսքը բոլոր աղջիկների մասին չէ, միայն նրանց, ովքեր կուզեն, ես մի քանիսին գիտեմ...» (Տաթև, 16 տարեկան)[86]:

«Երբ գործիքները ստեղծվել են, սեռային ոչ մի բաժանում չի եղել: Դա մեծերի մտածելակերպն է. երբ երեխան հասնում է ինչ-որ մի տարիքի, ասում են՝ աղջկաս տանեմ ջութակի, իսկ երբևիցե լսել եք, որ ասեն՝ աղջկաս տանեմ դուդուկի: Դե, եթե ծնողն այդպես մտածի, երեխային արդեն վաղ հասակից տրամադրի, թե այսինչ գործիքը նախատեսված է աղջկա, այսինչը՝ տղայի համար, պարզ է, որ նրանք էլ պետք է ծնողների մտքերի կրողը լինեն հետո» (Աննա Մխիթարյան, դուդուկահար)[87]:

«Մաթեմը տղի առարկա է» (ուսուցչուհի, Գյումրի):

«Գիտությունը կնոջ խելքի բանը չի»:

[82]«Գենդերային դերերը Հայաստանի Հանրապետության տարրական դպրոցի դասագրքերում» հետազոտություն, https://www.osf.am/wp-content/uploads/2014/01/Gender_roles_in_primary_school_textbooks-2012.pdf
[83]Նույն տեղում:
[84]Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2019թ. ՀՀՎԿ
[85]https://www.aravot.am/2019/10/30/1074857/
[86]WomenNet.am https://bit.ly/3bKV3UQ
[87]https://www.yerkir.am/news/view/15774.html

# ԻՆՉ ԵՆ ՓԱՍՏՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## Կանայք կրթության և գիտության ոլորտում

ՀՀ վիճակագրական կոմիտեի 2018 թ. տվյալներով՝ Հայաստանում մանկավարժադասախոսական, ուսուցչական, մանկավարժադասախոսական և պրոֆեսորադասախոսական կազմում կանանց թիվը նախադպրոցական կրթության համակարգում 99.6% է կազմում, հանրակրթության ոլորտում 88.8 % է, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտում՝ 68.4 %, միջին մասնագիտական կրթության ոլորտում՝ 74.5%, բարձրագույն կրթության համակարգում՝ 53.4%: Դրա հետ մեկտեղ բուհերի ռեկտորների կազմում կանանց թիվը 25% է, բուհերի մասնագիտական խորհրդի նախագահների թվում կանայք 13% են:

Գիտության ոլորտում գիտական աստիճան ունեցող մասնագետ հետազոտողների՝ գիտությունների թեկնածուների թվում կանայք կազմում են 48.3%, սակայն գիտությունների դոկտորների կազմում թիվը կտրուկ նվազում է՝21.5% [88]:

## Կանանց ու տղամարդկանց ներկայացվածությունը դասագրքերում

- Տարրական դպրոցի դասագրքերում[89]

Բոլոր դասագրքերում հիմնականում ներկայացված են տղամարդ ստեղծագործողների նյութերը: Որպես օրինակ կարելի է նշել «Մայրենի»-3 դասագիրքը (հեղինակներ՝ Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան, 2008), որտեղ 43 տղամարդ ստեղծագործողների կողքին ներկայացված է ընդամենը 2 կին, կամ նույն հեղինակների «Մայրենի»-4 դասագրքում ներկայացված է տղամարդ-կին ստեղծագործողների 38:2 հարաբերակցությունը: «Մայրենի» - 1 դասագրքում (հեղինակ՝ Վ. Սարգսյան) ,Իմ ընտանիքըե բաժնում ներկայացված են 49 իգական և 44 արական ընտանեկան դերեր, ընդ որում, դրանցից ընդամենը 9-ը աղջիկ են, 30-ը՝ տղա, 9 անգամ պատկերված է հայրիկի դեր, 8 անգամ՝ տատիկի, 5 անգամ՝ պապիկի և 32 անգամ՝ մայրիկի, ում հետ են կապվում գրեթե բոլոր ներընտանեկան հոգսերը և պարտականությունները՝ երեխաների խնամք, տնային գործեր, ճաշի պատրաստում և այլն:

- Ավագ դպրոցի դասագրքերում[90]

Հայ գրականության դասագրքերում արական սեռի են կերպարների 80%-ը, բացի այդ, դպրոցական դասագրքերում պատշաճ ներկայացված չէ բազմաթիվ կին գրողների ավանդը՝ դրանով իսկ հայ գրական ժառանգությունը սահմանափակվում է միայն տղամարդկանց աշխատություններով:

«Հայոց պատմություն» դասագրքերում տղամարդկանց կերպարների թիվը մոտ 30 անգամ գերազանցում է կանանց կերպարների թիվը: Կանանց կերպարները կազմում են բոլոր կերպարների ընդամենը 3%-ը: Տղամարդկանց պատկերող նկարները 7 անգամ գերազանցում են կանանց պատկերող նկարները: Որպես կանոն՝ տղամարդկանց պատկերող նկարները ասոցացվում են իշխանության, ուժի, փիրապետության հետ: Արդյունքում՝ սովորողների գիտակցության մեջ ձևավորվում է միայն ակտիվ, նվաճող, պաշտպանող, ստեղծագործող տղամարդու կերպարը: Կարծիք է ձևավորվում, թե կանայք մշակույթում որևէ ներդրում չեն ունեցել և չունեն: Կանայք հիշատակվում են միայն այն դեպքում, երբ հանդես են գալիս տղամարդու՝ հայրենիքի պաշտպանին հատուկ գործառույթներով:

[88] Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2019, ՀՀ ՎԿ https://www.armstat.am/file/article/gender_2019.pdf
[89] «Գենդերային դերերը Հայաստանի Հանրապետության տարրական դպրոցի դասագրքերում» հետազոտություն, https://www.osf.am/wp-content/uploads/2014/01/Gender_roles_in_primary_school_textbooks-2012.pdf
[90] ՀՀ ավագ դպրոցների ընտրված առարկաների ծրագրերի վերլուծություն՝ գենդերային զգայունության տեսանկյունից, 2016թ. (մանրամասն՝ Օսիպով-Սարգիզովա, 2015): http://documents.worldbank.org/curated/en/283891470062701229/pdf/107207-ARMENIAN-PUBLIC-ARMFinalpolicynoteexpandedandeditedJuly.pdf

# ՊԱՅՔԱՐԵՆՔ ՍԵՔՍԻԶՄԻ ԴԵՄ

## 2.1. ԽՈՒՍԱՓԵՆՔ

Յուրաքանչյուրը կարող է իր ներդրումն ունենալ հանրային խոսքում սեքսիզմի, խտրականության և ատելության խոսքի նվազեցման գործում: Ամենօրյա խոսքում և աշխատանքային միջավայրում սեքսիզմից խուսափելու համար ուշադրություն դարձնենք, թե ինչպիսի բառամթերք ենք օգտագործում մեր հանրային խոսքում՝ անկախ նրանից՝ այդ խոսքը հնչում է բազմահազարանոց հանրահավաքի ժամանակ, Հանրային կամ այլ հեռուստաընկերության ուղիղ եթերում, թե սոցիալական ցանցերում:

### Հետևենք մեր խոսքին

Փորձենք մեր միտքը և լեզուն հնարավորինս զերծ պահել գենդերային կարծրատիպերից, եթե անգամ դրանք ընդունված են հանրության մեծ մասի կողմից:

- Օրինակ՝ «կինը թույլ սեռ է»:

Խուսափենք այն ժողովրդական ասացվածքներից, ասույթներից և կատակներից, որոնք պարունակում են սեքսիզմ, այդ թվում թաքնված սեքսիզմ:

- Օրինակ՝ «Կնոջ տեղը խոհանոցն է» կամ ավելի քողարկված տարբերակ՝ «Լավ կինը ամուսնու խոսքին չի հակառակվի»:

Խուսափենք այնպիսի բառեր և արտահայտություններ օգտագործելուց, որոնք կարող են վիրավորական լինել կանանց և աղջիկների համար, կարող են գերադասել կամ ստորադասել սեռերից մեկին:

- Օրինակ՝ «կնիկ», «կանացի բամբասանք», «տղամարդուն ոչ հարիր» և այլն:

### Զերծ մնանք սեռի անտեղի հիշատակումից և կամ շահարկումից

Խուսափենք անհարկի համեմատություններ անելուց և ընդհանրացված կարծիքներ հնչեցնելուց:

- Օրինակ՝ կանայք զգացմունքային են, կամ՝ տղամարդիկ ավելի հաստատակամ են:

Խուսափենք միայն կանանց կամ միայն տղամարդկանց վերագրել հատկանիշներ, որոնք բնորոշ են մարդուն՝ անկախ սեռից:

- Օրինակ՝ «կանացի խորամանկություն», «տղամարդուն հատուկ քաջություն» և այլն:

Խուսափենք «տղամարդ» բառը որպես համարձակության, առաքինության, զսպվածության կամ այլ դրական հատկանիշների հոմանիշ գործածելուց: Նման հատկանիշներ ունեն բոլորը՝ անկախ սեռից:

- Օրինակ՝ «դուք համարձակություն չունեք» ասելու փոխարեն հաճախ ասում ենք «դուք տղամարդկություն չունեք»՝ տղամարդկությունը հավասարեցնելով համարձակությանը: Կամ ասում ենք «քեզանից ի՞նչ տղամարդ», այսպիսով տղամարդկությանը վերագրելով բարձր հատկանիշներ, որին ստորադասվում է կանացիությունը:

Նույնպես խուսափենք տղամարդկանց խոցելու, վիրավորելու համար նրանց կանանց հետ համեմատելուց, «կին» բառը և կանացիությունը որպես վիրավորանք գործածելուց:

- Օրինակ՝ տղամարդկանց վիրավորելու համար հաճախ ասում ենք «հո դու կնիկ չե՞ս» կամ «չե՞ս ամաչում կնգա պես բամբասում ես», այսպիսով տղամարդկանց վերագրելով ավելի բարձր հատկանիշներ, քան կանանց:

Խուսափենք որևէ մեկի սեռը և/կամ տարիքը անտեղի հիշատակելուց, երրորդ անձի կողմից արված որևէ գործողություն նրա սեռով պայմանավորելուց:

- Օրինակ՝ կին պաշտոնյայի մասին խոսելիս ասել «գեղեցիկ աղջիկ» կամ «երիտասարդ աղջիկ»: Կամ որևէ գործողություն նկարագրելիս ասել՝ «Դե, տղա է, պարզ է, որ այդպես պիտի անի», «Դե, աղջիկ է, դրա համար էլ այդպես է խոսում» և այլն:

## Նախադեպ.

**Արդյոք պարփադի՞ր էր քննադապության համար ասել ,սիրուն աղջիկե...**

Ազգային ժողովում ծավալված բանավեճի ժամանակ պատգամավորը՝ քննադատական խոսք հնչեցնելով պետական պաշտոնյայի հասցեին, նրան անվանեց «սիրուն աղջիկ», ինչին արձագանքեց մեկ այլ տղամարդ պատգամավոր. «Ոչ մեկը դեմ չի, որ դուք ունենաք կարծիք, որ այս պաշտոնյան աշխատում է վատ, անարդյունավետ. դա ձեր կարծիքի իրավունքն է: Ունեցեք էդ կարծիքը, հնչեցրեք: Բայց արդյոք պարտադի՞ր էր այդ քննադատության համար ասել «սիրուն աղջիկ»... Միջադեպից հետո նաև վերընշված կին պաշտոնյան սփիպված էր անդրադառնալ այդ արտահայտությանը, քանի որ լրագրողը մամուլի ասուլիսի ժամանակ փորձել էր կրկնել այն՝ խնդրելով մեկնաբանել պատգամավորի ասածը: «Եկեք չօգտագործենք «սիրուն աղջիկ» արտահայտությունը և հարգենք մարդկանց: Պետք չէ որևէ մեկի խոսքով խոսել՝ այդ արտահայտությանը հղում անելով, դուք պրոֆեսիոնալիզմը չեք պահպանում, ես չեմ ընդունում դա որպես կոմպլիմենտ»,- ասել էր նա՝ հույս հայտնելով, որ ապագա կին պաշտոնյաները նման խնդիրների առջև չեն կանգնի: Ի դեպ, «սիրուն աղջիկ» արտահայտությունը քննադատության էր արժանացել նաև սոցիալական ցանցերում:

/2019թ./

# Ցուցաբերենք հավասար մոտեցում




Հանրային քննարկումների, զրույցների և բանավեճերի ժամանակ կին և տղամարդ բանախոսներին դիմելիս ցուցաբերենք հավասար մոտեցում:

- Եթե տղամարդ զրուցակցին դիմում ենք «պարոն»-ով, կնոջը դիմենք «տիկին»-ով: Օրինակ՝ եթե տղամարդուն դիմում ենք «պարոն Պողոսյան», կնոջը դիմենք «տիկին Պետրոսյան»:

Խուսափենք կին գործիչներին ուղղել այնպիսի հարցեր, ինչպիսիք են, օրինակ՝ թե արդյոք նրա հայրը կամ ամուսինը չի՞ փորձում արգելել նրան ակտիվություն ցուցաբերել հանրային որևէ ոլորտում: Այսպիսի հարցով ամրապնդվում է այն խտրական համոզմունքը, թե ամուսինը կամ հայրը իրավունք ունի կնոջն արգելել ակտիվ գործունեություն ծավալել:

- Օրինակ՝ կին քաղաքական գործիչներին հաճախ ենք հարցնում, թե արդյոք ամուսինը դեմ չէ՞, որ նա քաղաքականությամբ զբաղվի: Այնինչ տղամարդկանց գրեթե երբեք չեն հարցնում, թե արդյոք կինը դեմ չէ՞, որ նա քաղաքականությամբ է զբաղվում:

Խուսափենք քաղաքական, մշակութային, հասարակական կին գործիչների հետ հարցազրույցներ վարել խոհանոցում՝ ամրապնդելով «կնոջ տեղը խոհանոցում է» կարծրատիպը: Խուսափենք այնպիսի նկարահանումներից, որոնց ժամանակ կանայք սուրճ կամ որևէ ճաշատեսակ են պատրաստում (բացառությամբ սննդին ու դրա պատրաստմանը նվիրված հաղորդումների), հագուստ արդուկում կամ կենցաղային այլ աշխատանքներ կատարում:

- Օրինակ՝ հայտնի կին քաղաքական գործչի մասին հեռուստահաղորդման շրջանակներում ցուցադրվել են նրա պատրաստած տոլման, քաղաքական գործչին տեսնում ենք սուրճ պատրաստելիս և մատուցելիս: Սրանք ամրապնդում են հասարակական կարծրատիպերն ու ակնկալիքները կանանցից:

«Ընդունում եմ իմ սխալը և ներողություն եմ խնդրում»

Վերջերս հայ իրականության մեջ երկու դեպք է արձանագրվել, երբ իրավապաշտպանների կողմից և սոցիալական ցանցերում բարձրացված աղմուկի արդյունքում քաղաքական կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձը ստիպված է եղել ներողություն խնդրել սեքսիստական արտահայտությունների համար:

Մի դեպքում Ազգային ժողովի փղամարդ պատգամավորը հրապարակային ներողություն խնդրեց կին պատգամավորի հասցեին խորհրդարանի ամբիոնից հնչեցված սեքսիստական բնույթի երկիմաստ ակնարկների համար: Մյուս դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձը հրապարակային ներողություն խնդրեց կին փորձագետի վերաբերյալ իր գրառման համար, որն արել էր Ֆեյսբուք սոցիալական ցանցում՝ համեմելով կնոջ գործունեությանն ուղղված սուր քննադատությունը նրա հասցեին վիրավորական և սեքսիստական ձևակերպումներով:

/2020թ./

Խուսափենք կանանց արտաքին տեսքը, քաշը, հագուստը, շպարը անտեղի քննարկման առարկա դարձնելուց:

- Օրինակ՝ կին քաղաքական-հանրային գործչի մասին խոսելիս/գրելիս խուսափենք նրա դիմահարդարումը, ավելորդ կիլոգրամներն ու արտաքին տեսքի հետ կապված որևէ այլ թեմա քննարկել:

**Կին թեկնածուները ընդդիմացան «գեղեցկուհիներ» որակմանը**

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ լրատվական կայքերից մեկը սեքսիստական վերաբերմունք ցուցաբերեց կին թեկնածուների նկատմամբ՝ սկսելով «Ընտրություններին մասնակցող գեղեցկուհիները» խորագրով շարքը, որտեղ կին քաղաքական գործիչների հետ հարցազրույցների մեխը նրանց արտաքին տեսքն էր, այլ ոչ թե գաղափարներն ու ծրագրերը: Շարքը սակայն շուտով փակվեց, քանի որ «գեղեցկուհիներ» որակմանը ընդդիմացան հենց ավագանու կին թեկնածուները՝ խնդրելով զերծ մնալ նման բնութագրերից և հրաժարվելով հարցազրույց տալ նման խորագրի ներքո:

/2018թ./

Կին գործիչների կողմից գործածվող ոչ վայելուչ բառամթերքը քննադատելիս խուսափենք նրա սեռը հիշատակելուց, փոխարենը շեշտադրենք, որ հանրային գործչին վայել չէ նման բառապաշարով խոսելը՝ անկախ սեռից:

- Օրինակ՝ խուսափենք «կին եք, մի քիչ զուսպ պահեք ձեզ» կամ «կնոջը վայել չէ հայհոյանքը» և նմանատիպ այլ արտահայտություններից:

# Լինենք ուշադիր պատկերներ ընտրելիս

Սեքսիզմից խուսափելու միջոցներից մեկն էլ պատկերներ ընտրելիս գենդերային զգայնություն ցուցաբերելն է: ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերում հաճախ են հայտնվում այնպիսի տեսանյութեր, լուսանկարներ, կոլաժներ, ծաղրանկարներ, որոնք ստորացուցիչ են կանանց համար, նվաստացնում են նրանց դերը, ու ամրապնդում են խտրականությունն ու կարծրատիպերը: Դրանցից կարելի է խուսափել՝ հետևելով ստորև ներկայացված առաջարկ-խորհուրդներին:

Խուսափենք կանանց մարմնի միջոցով պատկերազարդել մեր մեդիա արտադրանքը՝ այն զուտ դիտողի/ընթերցողի համար առավել գրավիչ դարձնելու համար: Կանանց մարմինը առարկայացնելով՝ նրանց դարձնում ենք սեռական օբյեկտներ:

- Օրինակ՝ հորոսկոպ տպագրելիս այն «չզարդարենք» որևէ կնոջ մարմնով:

Խուսափենք կանանց կամ կանանց մարմինները որևէ առարկայի հետ համեմատող կադրերից, պատկերներից, տեքստերից: Խուսափենք այնպիսի կադրերից/պատկերներից, որոնք ընդգծում են կնոջ մարմնի որևէ հատված (բացառությամբ առողջապահական կամ մասնագիտացված այլ հաղորդաշարերի/թողարկումների շրջանակներում գործածվող պատկերների):

- Օրինակ՝ կադրում կանանց ցուցադրելիս խուսափենք խոշոր պատկերով ցուցադրել նրանց մարմնի առանձին հատվածները:

Խուսափենք սոցիալական ցանցերում այնպիսի գրառումներ հավանելուց (like) և տարածելուց (share), որոնք սեքսիստական են, խտրական են և ամրապնդում են կանանց և տղամարդկանց վերաբերյալ կարծրատիպերը: Սոցիալական ցանցերում բազմաթիվ են սեքսիստական կոլաժները, լուսանկարներն ու գրառումները: Դրանք հավանելով կամ տարածելով՝ մենք դառնում ենք խտրականության քաջալերման ու ամրապնդման անմիջական մասնակից:

- Օրինակ՝ հատկապես կին քաղաքական գործիչների, իրավապաշտպանների լուսանկարները հաճախ օգտագործում են վիրավորական և նվաստացուցիչ բնույթի կոլաժներում՝ տարածելով դրանք սոցցանցերում՝ հանրային գործունեություն ծավալող կանանց թիրախավորելու նպատակով:

**Նախադեպ.**

**Տուգանք կանանց նկատմամբ բռնության փեսարաններ ցուցադրելու համար**

Հայաստանյան հեռուստաընկերություններից մեկով հեռարձակվող սերիալի մի կադր, որտեղ պատկերված տղամարդը փորձում էր մկրատով կտրել կնոջ քիթը, ցնցեց հանրությունը: Թեև բարձրացված աղմուկից հետո հեռուստաընկերությունը հեռացրեց փեսանյութը յութուբյան իր ալիքից, այնուամենայնիվ, բռնության կադրեր հեռարձակելու համար պատասխանատվությունը չուշացավ: Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, արձագանքելով մի շարք ՀԿ-ների հայտարարությանը, ուսումնասիրեց ակնհայտ բռնության, կտտանքների ենթարկելու, ֆիզիկական և հոգևոր ցավ պատճառելու փեսարանները, որոնք արգելված են օրենքով և հարուցեց Ընկերության նկատմամբ վարչական վարույթ: Որոշում կայացվեց կիրառել օրենքով նախատեսված տույժը՝ հեռարձակողին տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով՝ 500.000 ՀՀ դրամ:

/2019թ./

# Զգուշությամբ ընտրենք հումորը

Անվնաս, միայն ժպիտ կամ ծիծաղ առաջացնող հումորի և սեքսիզմի տարանջատման սահմանը շատ նուրբ է և հաճախ դժվար տեսանելի: Անեկդոտը, կատակը ոմանց կարող է անկեղծ զվարճանք պատճառել, ոմանց էլ՝ խոցել կամ վիրավորել:

Կարծրատիպերի, խտրականության ու խարանի տարածման ու ամրապնդման լայն տարածված միջոցը հումորն է, ուստի պետք է զգուշությամբ վարվենք այդ ժանրի հետ՝ լինի դա հեռուստատեսային կամ ռադիոհաղորդում, թերթում հումորային սյունակ թե կենցաղում հնչող անեկդոտ: Ընդ որում, հումորի միջոցով լայնորեն տարածվում են ոչ միայն սեքսիստական, այլև ռասիստական, ազգայնական, հակասեմիտական և հոմոֆոբ գաղափարներ: Հումորի միջոցով հեշտ է հրահրել ատելություն և ագրեսիա որևէ խմբի կամ անձանց նկատմամբ:

Չկա պատրաստի դեղատոմս՝ հումորում սեքսիզմն ու խտրականությունը գտնելու/նկատելու համար: Լուծումը մտածելն է ու հարցարկելը, թե արդյոք տվյալ հումորը թիրախավորում, վիրավորում կամ ստորադասում է որևէ խմբի: Եթե պատասխանը դրական է, ապա փորձենք դիմադրել այդ հումորը ներկայացնելու գայթակղությանը, որքան էլ այն առաջին հայացքից կարող է զվարճալի ու անվնաս թվալ:

- Օրինակ՝ շիկահեր կանանց մտավոր կարողությունները կասկածի տակ դնող կարծրատիպային անեկդոտները:

«Հարց՝ - Շիկահերը ցնցուղի ներքո ի՞նչ է: Պատասխան՝ - Մաքուր հիմարություն»:
Հարցնենք ինքներս մեզ՝ արդյոք մեր շրջապատում կա՞ն շիկահեր կանայք, արդյոք մենք կպատմե՞նք նրանց ներկայությամբ այս անեկդոտը, արդյոք նրանց չե՞նք վիրավորի դրանով: Տվյալ օրինակում կարծրատիպի ու վիրավորանքի առկայությունն ակնհայտ է, սակայն բազմաթիվ այլ հումորային տեքստերում դժվար է անմիջապես նկատել խտրականությունն ու սեքսիզմը:

Հումորի միջոցով, անշուշտ, կարելի է նաև ծաղրել բացասական երևույթները, այդ թվում և՝ սեքսիզմը, սակայն այս պարագայում ևս պետք է ուշադրությամբ ընտրենք բովանդակությունը, քանի որ կարծրատիպային մտածողությունը ծաղրելու նպատակով վերարտադրվող մտքերը/գաղափարները կարող են ավելի շատ խորացնել կարծրատիպային համոզմունքները, քան լսարանին տրամադրել դրանցից հրաժարվելու:

- Օրինակ՝ ժամանակին մեծ տարածում ունեցող «Կարգին հաղորդման» թողարկումներից մեկում ամուսինը կնոջն ասում էր. «Որ էդքան բան հասկանայիր, մարդ կըլնեիր, տղամարդ կըլնեիր…»: Այդ մանրապատումի հերոս տղամարդը թեև չէր ներկայացվում որպես դրական կերպար, սակայն նրա հնչեցրած կարծրատիպային միտքը 2000-ական թվականներին շատ դեռահասներ սկսեցին կրկնել՝ իրենց շրջապատի աղջիկներին լռեցնելու, ստորացնելու նպատակով:

Սեքսիստական հումորը մերժելը ոչ մի դեպքում չի կարող մեկնաբանվել որպես հումորի զգացման բացակայություն, քանի որ ընդամենը նշանակում է, որ դուք մտահոգ եք սեռերի միջև առկա անհավասարության առկայությամբ և պատրաստ եք ձեր փոքրիկ ներդրումն ունենալ այդ անարդարությունն առավել չխորացնելու գործում:

Նախադեպ.

**Հեռուստաընկերությունը խոստացել է հետամուտ լինել իր եթերում գենդերային հավասարության ապահովմանը**

Հայաստանյան հեռուստաընկերություններից մեկի հաղորդման շրջանակներում վարողը՝ դիմելով կանանց, նշել էր հետևյալը. «Երբ ղեկին կին է՝ արդեն ֆորսմաժոր է: Սիրելի կանայք, նախքան ղեկին նստելն անհրաժեշտ է լավ սովորել ճանապարհային երթևեկության ու վարելու կանոնները»: Հաղորդավարի տեքստին հաջորդել էր կին վարորդների և առհասարակ կանանց վերաբերյալ խտրական ու նվաստացուցիչ արտահայտություններով լի ռեպորտաժը: Այս առիթով «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան» դիմել էր ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնին՝ մատնանշելով ակնհայտ խտրականության փաստերը: Դիմումը վերահասցեագրվել էր հեռուստաընկերությանը, որտեղից էլ պաշտոնական պատասխան էր ստացվել առ այն, որ հեռուստաընկերությունն ընդունում է, որ «խնդրո առարկա ձևակերպումները կարող են խնդրահարույց լինել և դիտարկվել որպես կանանց իրավունքների սահմանափակում, ինչը անթույլատրելի է քաղաքակիրթ հասարակության համար: Հավաստացնում ենք, որ հեռուստաընկերությունը հետամուտ է լինելու իր եթերում գենդերային հավասարության ապահովմանը»:

2018 թ.

# 2.2. ԿԱՆԽԵՆՔ.

## Առաջարկություններ և լուծումներ

Սեքսիզմի կանխարգելումն ու դրա դեմ պայքարը պետության որդեգրած գենդերային քաղաքականության անբաժանելի մասն են կազմում և ենթադրում են վարքագծային և մշակութային փոփոխություններ անհատական, ինստիտուցիոնալ և կառուցվածքային մակարդակներում: Այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլերը տեղավորվում են ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարության «Գենդերային խտրականության կանխարգելում» գերակայությամբ նախատեսվող միջոցառումների շրջանակում: Իսկ իրավական հիմք են ՀՀ Սահմանադրությունը[91], «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը[92], ինչպես նաև գենդերային հավասարությունն ապահովելու մասին Հայաստանի միջազգային պարտավորությունները մի շարք հիմնարար փաստաթղթերի շրջանակում, որոնց թվում են՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, Պեկինի Գործողությունների ծրագիրը և Կայուն զարգացման նպատակները: Այդ փաստաթղթերից յուրաքանչյուրը, մատնանշելով կանանց առաջընթացը խոչընդոտող գործոնները, հատուկ անդրադարձ է կատարում գենդերային կարծրատիպերի հաղթահարման խնդրին՝ ներառյալ հանրային կյանքում սեքսիզմի բոլոր դրսևորումների դեմ պայքարին: Որպես Եվրոպայի խորհրդի անդամ պետություն՝ Հայաստանն անմասն չի մնում նաև ԵԽԽՎ-ի և ԵԽ Նախարարների կոմիտեի ընդունած սեքսիզմին վերաբերող մի շարք բանաձևերից, որոնք անդրադառնալով սեքսիզմի դրսևորումներին ԶԼՄ-ներում, սոցիալական ցանցերում, գովազդում և հանրային կյանքի այլ ոլորտներում, նախանշում են այդ երևույթի կանխարգելման հնարավոր ուղիները[93]:

Առաջարկվող միջոցների և գործողությունների շրջանակը բավականին լայն է: Հաշվի առնելով հանրության շրջանում սեքսիզմի դրսևորումների նկատմամբ ցուցաբերվող կողմնակալ և կանխամտածված պահվածքը՝ սեքսիզմի դեմ պայքարում նպատակին առավելագույնս ծառայող գործիքակազմը ներառում է ինչպես օրենսդրական բարեփոխումների իրականացում, վարչական և ինքնակարգավորող գործիքների կիրառում, այնպես էլ հասարակական կարծիքի վրա ներազդելու տարբեր միջոցներ, այդ թվում՝ իրազեկվածության բարձրացմանն ուղղված համակարգված ջանքեր: Պետությունը նաև պետք է երաշխավորի, որ կանխամտածված և շարունակական սեքսիստական վարքագիծը և ատելության խոսքը անհետևանք չեն մնա, և անհրաժեշտության դեպքում կսահմանվեն պատասխանատվության և տուժածներին փոխհատուցման մեխանիզմներ: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 15-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրինագիծը,[94]

---

[91]ՀՀ Սահմանադրություն, Հոդված 29 (Խտրականության արգելք), Հոդված 30 ( Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն), Հոդված 86, 4 կետ (Կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանման մասին պետության քաղաքականության նպատակը):

[92]«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք, Հոդված 6, Գենդերային խտրականության արգելումը, 5 -րդ կետ. «Արգելվում է անձի վերաբերյալ սեռի հատկանիշով պայմանավորված վիրավորական և նվաստացուցիչ հրապարակային հայտարարություն անելը, ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով»: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841

[93]ԵԽԽՎ թիվ 1751 (2010) բանաձևը՝«ԶԼՄ-ներում սեքսիստական կարծրատիպերի դեմ պայքարը» և թիվ 1557 (2007) բանաձևը՝ «Կնոջ կերպարը գովազդում»: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM / Rec (2013) 1 «Գենդերային հավասարության և լրատվամիջոցների մասին», CM / Rec (2017) 9 «Տեսալսողական ոլորտում գենդերային հավասարության մասին», CM / Rec (2019) 1 «Սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ» բանաձևերը և այլ փաստաթղթեր:

[94]http://www.parliament.am/draftreading_docs7/K-437_DR2.pdf

որով քրեականացվում են անձի կամ անձանց խմբի նկատմամբ մի շարք հատկանիշներով, այդ թվում՝ սեռով պայմանավորված, բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, վերաբերում են միայն ծայրահեղ դրսևորումներին և չեն կարգավորում ատելության խոսքի և սեքսիզմի կանխարգելման և դրանց դեմ պայքարի հետ կապված խնդիրները:

Հայաստանը սեքսիզմի դեմ պայքարի մեկնարկային փուլում է գտնվում, և յուրաքանչյուր նախաձեռնություն բավական դանդաղ է ընթանում՝ հանդիպելով հասարակության տարբեր շերտերի դիմադրությանը: Թեպետ կարելի է փաստել, որ հատկապես քաղաքական դաշտում սեքսիզմի առանձին դրսևորումներ արժանանում են հանրության բացասական արձագանքին: Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ այս գործում արդյունավետության հնարավոր է հասնել միայն տարբեր ինստիտուտների ակտիվ ներգրավվածությամբ՝ սկսած գործադիր, օրենսդիր մարմիններից մինչև քաղաքացիական հասարակություն և մեդիա:

Ստորև ներկայացվող մի շարք առաջարկներն ուղղված են հանրային տարբեր ինստիտուտներին, սակայն ակնկալվում է, որ միայն բոլորի միասնական և համակարգված ջանքերի արդյունքում հնարավոր կլինի խոսել սեքսիզմի կանխարգելման ու դրա դեմ պայքարի արդյունավետության մասին:

## ՀՀ Ազգային ժողով և Կառավարություն

- Ամրագրել «Պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի «Պատգամավորական էթիկայի կանոններ» հոդվածում լրացուցիչ դրույթներ, որոնք կնպաստեն պատգամավորների զսպողականությանը հանրային ելույթներում՝ սեքսիստական դրսևորումներից խուսափելու առումով:
- Կատարել փոփոխություններ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում՝ նախատեսելով էթիկայի հարցերով մշտական հանձնաժողով կազմավորելու հնարավորություն:
- Մշակել օրենսդրական կամ այլ մեխանիզմներ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի» 6-րդ հոդվածով սահմանված ուղղակի և անուղղակի խտրականության արգելքի մասին հետևյալ դրույթների գործնական կիրառումը և վերահսկողությունն ապահովելու համար՝
  - ընտանեկան դրության, հղիության և ընտանեկան պարտականությունների կատարման հիմքով.
  - միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց տարբեր վարձատրություն, աշխատանքի վարձատրության ցանկացած փոփոխություն (բարձրացում կամ իջեցում) կամ աշխատանքի պայմանների վատթարացումը սեռի հատկանիշով.
  - սեռական ոտնձգություն.
  - գենդերային կարծրատիպերի վերարտադրություն զանգվածային լրատվության միջոցներով, կրթության և մշակույթի միջոցով.
  - այնպիսի պայմանների հաստատում, պահանջների ներկայացում, որոնք առաջացրել են կամ կարող են առաջացնել բացասական հետևանքներ՝ որոշակի սեռի անձանց վնաս պատճառելու ձևով.

- սեռի հատկանիշով պայմանավորված վիրավորական և նվաստացուցիչ հրապարակային հայտարարություններ, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով:

- Մշակել մեխանիզմներ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում ամրագրված ռասային, ազգությանը, մասնագիտությանը կամ սոցիալական ծագմանը, տարիքային խմբին կամ սեռին, լեզվին, կրոնական և այլ համոզմունքներին վերաբերող վիրավորական արտահայտություններ, համեմատություններ և պատկերներ պարունակող գովազդի արգելքի մասին դրույթի գործնական կիրառումը և վերահսկողությունն ապահովելու համար:

- Ամրագրել «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի նախագծում սեռի հատկանիշով խտրականություն պարունակող կամ քարոզող հաղորդումների հեռարձակման արգելքը, նախատեսել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի լիազորությունների շրջանակում եթերի մշտադիտարկում այդ ուղղությամբ և նախատեսել արգելքը խախտելու դեպքում հնարավոր պատասխանատվության միջոցներ[95]:

- Ապահովել կարգավորող պետական մարմնի, այն է՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կազմում կանանց ու տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածությունը[96]:

- Ներառել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի և հեռարձակողների կողմից ընդունվող ներքին վարքականոնների մեջ գենդերային խտրականությունը բացառող դրույթներ:

- Ամրագրել ոլորտը կարգավորող օրենքով հանրային հեռարձակողների պարտավորությունը՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը և սեռի հատկանիշով խտրականության հաղթահարմանն ուղղված հաղորդումների պատրաստումն ու մատուցումը՝ դրանով իսկ նպաստելով պետության որդեգրած գենդերային քաղաքականության իրականացմանը:

- Ամրագրել ՀՀ աշխատանքային օրենսգրքում սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված արարքի կամ դրա սպառնալիքի արգելքը՝ դրանով իսկ կյանքի կոչելով Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Հայաստանի Հանրապետության 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցների եզրափակիչ դիտարկումների շրջանակում արված հանձնարարականները[97]:

- Ամրագրել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունների թվում աշխատանքի վայրում սեռի հատկանիշով խտրականության դրսևորումները բացահայտելու և արձագանքելու պարտավորությունը՝ համապատասխան մեխանիզմներ ներդնելով այդ ուղղությամբ[98]:

---

[95]Այս առաջարկների մի մասը տեղ են գտել առաջին ընթեցմամբ ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի նախագծում ՕքսԵՋեն Հիմնադրամի կողմից ստեղծված փորձագիտական խմբի որոշ առաջարկներ՝ մասնավորապես.
Հոդված 9. Տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքը
7. Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնք հետապնդում են կանանց եւ տղամարդկանց սեռի հատկանիշով խտրականություն քարոզելու նպատակ կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն:
Հոդված 23. Հանրային հեռարձակողի կարգավիճակը եւ գործունեության սկզբունքները
2. Հանրային հեռարձակողները պարտավոր են՝
գ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են կանանց եւ տղամարդկանց փաստացի հավասարության խթանմանը եւ սեռի հատկանիշով խտրականություն պարունակող կարծրատիպերի հաղթահարմանը.

[96]«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի նախագծում ամրագրված է կարգավորող պետական մարմնի կազմում սեռային ներկայացվածությունը ապահովելու պահանջը(Հոդված 36, կետ 1.) , սակայն հստակեցված չէ համամասնությունը:

[97]Տես՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի՝ ՀՀ 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցների եզրափակիչ դիտարկումների «Զբաղվածություն և տնտեսական կարողությունների ընդլայնում» բաժնում. «Ընդունել աշխատավայրում սեռական ոտնձգությունների սահմանումը տվող և այն արգելող օրենսդրություն և հաջորդ պարբերական զեկույցում ներառել տվյալներ, որոնք վերաբերում են սեռական ոտնձգությունների վերաբերյալ գրանցված դեպքերի թվին, հետաքննությունների, քրեական հետապնդումների և իրավախախտների վերաբերյալ կայացած դատավճիռներին», CEDAW/C/ARM/CO/5-6
https://www.refworld.org/publisher,CEDAW,,ARM,583863b34,0.html

[98]Նույն տեղում՝ «Մշակել գենդերային խտրականության և աշխատավայրում սեռական ոտնձգությունների վերաբերյալ բողոքների ներկայացման գաղտնի և անվտանգ համակարգ և ապահովել զոհերի արդյունավետ հասանելիությունը փոխհատուցման միջոցներին». CEDAW/C/ARM/CO/5-6
https://www.refworld.org/publisher,CEDAW,,ARM,583863b34,0.html

- Կազմակերպել բաց ֆորումներ և քննարկումներ՝ օմբուդսմենի, քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ սեքսիզմի կանխարգելման ու դրա դեմ պայքարի գործողությունների արդյունավետությունը գնահատելու և միասնական քայլեր մշակելու նպատակով:
- Մշակել արդյունավետ մեխանիզմներ պետական համակարգում սեքսիստական գործելակերպին և սեքսիզմի դրսևորումներին օպերատիվ արձագանքելու և գնահատական տալու նպատակով:

## ՀՀ Ազգային ժողով և Կառավարություն

- Վերանայել կրթության չափորոշիչները, ուսումնական ծրագրերը և դպրոցական դասագրքերը, այդ թվում վիզուալ պատկերները՝ հաշվի առնելով այդ ուղղությամբ իրականացված հետազոտությունները[99] և Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի ՀՀ 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցների եզրափակիչ դիտարկումները[100] կրթության ոլորտի վերաբերյալ՝
  - սեռի հիմքով խտրական պատկերացումներ ձևավորող կարծրատիպերից զերծ մնալու,
  - մասնագիտական ուղղորդման հարցում խտրականության դրսևորումները վերացնելու,
  - դասագրքերում կանանց և տղամարդկանց ավելի հավասարակշռված և համարժեք ներկայացվածություն ապահովելու և
  - գենդերային հավասարության սկզբունքները կրթության ոլորտում ներդնելու նպատակով:
- Խրախուսել գենդերային ուսուցման ներդրումը լրագրողական մասնագիտությունների ուսումնական ծրագրերում:

[99]«Գենդերային դերերը Հայաստանի Հանրապետության տարրական դպրոցի դասագրքերում» հետազոտություն, https://www.osf.am/wp-content/uploads/2014/01/Gender_roles_in_primary_school_textbooks-2012.pdf
ՀՀ ավագ դպրոցների ընտրված առարկաների ծրագրերի վերլուծություն՝ գենդերային զգայունության տեսանկյունից, 2016, http://documents.worldbank.org/curated/en/283891470062701229/pdf/107207-ARMENIAN-PUBLIC-ARMFinalpolicynoteexpandedandeditedJuly.pdf
[100]CEDAW/C/ARM/CO/5-6 https://www.refworld.org/publisher,CEDAW,,ARM,583863b34,0.html

- Ձևավորել «Զանգվածային լրատվության միջոցներում կանանց իրավունքների պաշտպանության աշխատանքային խումբ»՝ կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների և փորձագետների, ինչպես նաև լրագրողների, բլոգերների, վլոգերների (վիդեո բլոգ վարողների), խմբագիրների և հեռուստաալիքների պրոդյուսերների ներգրավմամբ՝ մասնագիտական խորհրդատվություն, գիտելիքների և փորձի փոխանակում կազմակերպելու նպատակով:
- Մշակել ԶԼՄ ներկայացուցիչների համար մեթոդական նյութեր և իրականացնել կարճաժամկետ կրթական ծրագրեր՝ լրագրողների գենդերային հավասարության վերաբերյալ պատկերացումները բարելավելու և իրադարձությունները լուսաբանելիս գենդերային զգայունությունը բարձրացնելու նպատակով:
- Ապահովել գենդերային հարցերով մասնագիտական գրականության հասանելիությունը՝ ստեղծելով էլեկտրոնային շտեմարան, թեմատիկ բացատրական բառարաններ, ուղեցույցներ, մասնագիտական ձեռնարկներ, քարոզչական պաստառներ:
- Նպաստել գենդերային հարցերի վերաբերյալ Հայաստանի վավերացրած միջազգային իրավական փաստաթղթերի և գենդերային հավասարության հասնելու ոլորտում Հայաստանի միջազգային պարտավորությունների մասին լրագրողների իրազեկվածությանը, ապահովել միջազգային փաստաթղթերի հայերեն որակյալ թարգմանությունները:
- Ձեռնարկել միջոցներ պետության գենդերային քաղաքականության շրջանակներում ընդունված փաստաթղթերի մասին հանրապետության մեդիա հանրության իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ:
- Ստեղծել և հրատարակել «Ով ով է» տպագիր կամ էլեկտրոնային տեղեկագիր՝ ապահովելով տարբեր ոլորտներում կին և տղամարդ փորձագետների և գիտնականների հավասարակշռված ներկայացվածությունը:
- Իրականացնել մշտադիտարկումներ ԶԼՄ-ներում գենդերային խնդիրների և կանանց կերպարների ներկայացման միտումներին հետևելու համար, աջակցել տեղեկատվության ոլորտում կատարվող հետազոտություններին և ռազմավարության իրականացմանը՝ ուղղված ԶԼՄ-ներում հավասարակշռված, ոչ կարծրատիպային կնոջ կերպարի ստեղծմանը:
- Մշտադիտարկել հեռուստաեթերը և արձանագրել այն հաղորդումները, որոնք հետապնդում են սեռի հատկանիշով խտրականություն քարոզելու նպատակ կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն
- Համագործակցել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի հետ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով սեռի հատկանիշով խտրականության արգելքը շրջանցող դեպքերը բացահայտելու և հնարավոր պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ՝ եթերում նմանօրինակ դրսևորումները հնարավորինս նվազեցնելու նպատակով
- Իրականացնել հասարակական և քաղաքական ոլորտներում մշտադիտարկում՝ սեքսիզմի դրսևորումները բացահայտելու և դրանց հակազդելու նպատակով:
- Կազմակերպել քննարկումներ, համաժողովներ և մեդիա այցեր ԶԼՄ խմբագիրների և պրոդյուսերների, մեդիա ոլորտի պատասխանատուների համար՝ գենդերային զգայուն թեմաների լուսաբանման և հեռուստաարտադրության մեջ այդ թեմաների մատուցման միջազգային լավագույն փորձը ներկայացնելու նպատակով:

- Կազմակերպել քարոզարշավներ ընդդեմ սեքսիզմի՝ թեմային առնչվող ազդեցիկ (կրեատիվ) ուղերձների, տպագիր պաստառների, թվային աքսեսուարների, սթիքերների և այլ տիպի խորհրդանշական իրերի օգտագործմամբ:
- Նպաստել թեմատիկ էլեկտրոնային խաղերի և թեստերի ստեղծմանը՝ հանրային իրազեկումը բարձրացնելու և սեքսիզմի նկատմամբ հանրության շրջանում բացասական դիրքորոշում ձևավորելու նպատակով:
- Համագործակցել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի հետ՝ հեռարձակումների՝ խտրականությունից զերծ բովանդակություն ապահովելու վերաբերյալ դիտարկումներ և առաջարկություններ ներկայացնելու նպատակով:
- Լրացնել ԶԼՄ-ների էթիկայի վարքականոնները խտրականությունը և սեքսիզմը բացառող դրույթներով՝ էթիկայի դիտորդ մարմնի, լրագրողական միավորումների և ասոցիացիաների հետ համագործակցությամբ:
- Կազմակերպել ամենամյա մրցանակաբաշխություններ՝ պարգևատրելով սեքսիզմի դեմ պայքարի լավագույն օրինակները, մեդիա ոլորտի օրինակելի լուսաբանումներն ու հաղորդումները, ինչպես նաև պարսավանքի ենթարկելով մշտադիտարկումների միջոցով բացահայտվող սեքսիզմի վատագույն դրսևորումները:
- Իրականացնել իրազեկման միջոցառումներ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ՝ սեքսիզմի դեմ պայքարում այդ օրենքով ընձեռվող հնարավորությունների քարոզչության և կիրարկման նպատակով:

***

Սեքսիզմն իր դրսևորումներով բազմաշերտ է և, ինչպես ցանկացած խտրականություն՝ մտածողության, խոսքի, ժեստի, գործողության ու վարքագծի մի ամբողջություն է: Հետևապես, տարբեր հանրային ինստիտուտներին հասցեագրված սեքսիզմի դեմ պայքարելու առաջարկությունների իրացումը մեծապես կախված է այդ երևույթի հանդեպ անհատների վերաբերմունքից՝ անկախ նրանից, թե ինչպիսի դաստիարակություն ու կրթություն են ստացել, ինչ մշակույթի կրող են, ինչ քաղաքական հայացքներ ունեն…

Իրատեսական չէ վերացնել սեքսիզմն առհասարակ, քանի դեռ մեզնից յուրաքանչյուրն իր փոքրիկ ներդրումը չի արել այդ դժվարին, բայց և կարևոր գործում, որի նպատակն է ապրել խտրականությունից զերծ հասարակությունում, որում կանայք և տղամարդիկ կունենան հավասար իրավունքներ ու հնարավորություններ և կկարողանան լիարժեք իրացնել իրենց ներուժը:

Այդ նպատակը միասնական ջանքեր է պահանջելու, այն է՝ նկատել սեքսիզմի դրևորումները, բարձրաձայնել դրանց մասին և քայլեր կատարել՝ բացառելով դրանք մեր ընտանիքներում, աշխատավայրում, ընկերների միջավայրում, սոցիալական հարթակների էջերում և առհասարակ հանրային շփումներում և կյանքում:

Ճանաչե՛նք, խուսափե՛նք և կանխե՛նք սեքսիզմը
#ՎԵՐՋսեքսիզմին